

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

(Կրթական երիտասարդական համագումարի
նյութերի ժողովածու)
Ծաղկաձոր, հունիսի 8-10, 2007թ.



ԵՀԽ Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական
Կլոր սեղան հիմնադրամ

Երևան 2007

ՀՏԳ- 37. 01
ԳՄԴ- 74. 00
Կ 839

Կ 839 Կրթությունը՝ զարգացման նախապայման (Կրթական երիտասարդական համագումարի նյութերի ժողովածու): Եր., ԵՀԽ Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ, 2007, 166 էջ

Ժողովածուն ներկայացնում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի կողմից՝ Կրթական և զարգացման ծրագրի շրջանակներում 2007 թվականի հունիսի 8-10-ը Ծաղկաձորում կազմակերպված «Կրթությունը՝ զարգացման նախապայման» կրթական երիտասարդական համագումարի ընթացքին ներկայացված զեկուցումները և համագումարի հուշագիրը:

Ձեկուցումները հիմնականում արծարծում են կրթական բարեփոխումներին, արտադպրոցական և միջին մասնագիտական կրթությանը, քրիստոնեական դաստիարակությանը, կրթական ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական տարբեր մարմինների, Եկեղեցու և հասարակական կազմակերպությունների համագործակցությանն առնչված խնդիրներ:

Գիրքը նախատեսված է կրթության ոլորտի մշակների, կրթական խնդիրներով զբաղվող հասարակական կառույցների և ընթերցող լայն շրջանների համար:

ԳՄԴ- 74.00

Ժողովածուն պատրաստվել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի նախաձեռնությամբ և հրատարակվել Եկեղեցական զարգացման ծառայության՝ Գերմանիայի բողոքական եկեղեցիների միության (EED) ֆինանսական օժանդակությամբ:

ISBN 978-99941-2-102-1

© ԵՀԽ Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարեն Նազարյան - Երկու խոսք	4
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	
Տ. Վազգեն վարդապետ Նանյան - Անհատի ձևավորման խնդիրն արդի արժեհամակարգի և կրթության համատեքստում	7
Տ. Կյուրեղ քահանա Տալյան - Քրիստոնեական դաստիարակություն	11
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ	
Մարինե Հակոբյան - Կրթության համակարգի իրավական կարգավորումը. հնարավորություններ և խնդիրներ	17
ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	
Արտակ Աղբալյան - Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգը և նրա բարեփոխման առկա իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում	27
Վաղարշակ Խաչատրյան - Կրթական բարեփոխումներ, մասնագիտական կրթություն-աշխատաշուկա	35
Սելանյա Դավթյան - Մասնագիտական կողմնորոշման խնդիրները հանրակրթական դպրոցում	43
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Աստղիկ Ասրյան - Սոցիալական կենտրոնների և հասարակական Կազմակերպությունների դերն արտադպրոցական կրթության զարգացման գործընթացում	50
Վարդգղատ Կարապետյան - Հասարակական հատվածի դերը արհեստագործական կրթության զարգացման գործում	53
Նազարեթ Նազարեթյան - Կրթություն ողջ կյանքի ընթացքում. արհեստագործական ոլորտի զարգացում, միջազգային կազմակերպությունների դերն ու համագործակցության հեռանկարները	57
ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՊՀ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ	
Նանա Դուլիաշվիլի - Թբիլիսիի Երիտասարդաց տան հիմնադրամ	62
Իռան ավագ սարկավագ Դիդենկո - Բարեփոխումներն Ուկրաինայի կրթական համակարգում	70
Սիլվա Մատրունչիկ - Ջարգացում՝ յուրաքանչյուր կազմակերպության կայունության միակ հուսալի հիմքը	74
ԱՄՓՈՓՈՒՄ	82

Երկու խոսք

«Հայաստանյան Կլոր Սեղանը սերտորեն աշխատում է տեղական եկեղեցիների և հասարակական կազմակերպությունների հետ՝ իր նպաստը բերելու քաղաքացիական հասարակության զարգացմանը Հայաստանում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում»: Այս է Հայաստանյան Կլոր Սեղանի հիմնադրամի առաքելությունը:

Կրթությունը մեզ համար զարգացման ամենակարևոր բաղադրիչն է: Բաղաքական, հասարակական և տնտեսական փոփոխություններից հետո կրթությունը Հայաստանում, իրապես, ձեռք է բերել կենսական նոր նշանակություն: Հայաստանի կրթական համակարգում վերափոփոխումներ սկսվեցին իրականացվել անկախության առաջին իսկ օրերից: Սակայն դրանք միայն այսօր են դարձել տեսանելի և անշրջելի: Հայաստանը կրթական տարբեր ոլորտների վերաբերյալ ընդունված փաստաթղթերի և հռչակագրերի միջոցով համաձայնել է միանալ եվրոպական մի շարք գործընթացների: Այժմ դրանք դեպի Եվրամիություն, եվրոպական արժեքներ և եվրաինտեգրում տանող ամենից ակնհայտ կապերն են:

Իր հիմնադրումից՝ 1997 թվականից սկսած, Հայաստանյան Կլոր Սեղանի հիմնադրամն առաջնային նշանակություն է տվել կրթական ծրագրերին: Հստակ է, որ թե՛ պատմության ընթացքում, թե՛ այսօր մեր երկրի ապագայի և նրա զարգացման մասին խորհելիս պետք է նախևառաջ ապավինել մարդկային ներուժին: Ինչպես վերջերս նշեց Հայաստանի Հանրապետության վարչապետը, մենք չունենք մեծ բնական ռեսուրսներ, ուղղակի ելք դեպի ծով, իսկ մեր երկրի չորս սահմաններից երկուսը փակ են հարևան երկրների կողմից: Միակ ներուժը, որին մենք կարող ենք ապավինել, մարդկային ռեսուրսն է, որն առանց ժամանակակից և բարձրակարգ կրթության չի կարող կշիռ ունենալ: Բարեբախտաբար, կրթությունն ու գիտելիքը մշտապես կարևոր մասն են կազմել մեր ազգային արժեքների. մի արժեք, որը համահունչ է 21-րդ դարի՝ կրթության և բարձր տեխնոլոգիաների դարի միտումներին: Նոր դարաշրջանի մարտահրավերները դիմագրավելու համար լավ պատրաստված լինելու համար մենք պետք է գիտակցենք, որ միայն կրթված և փորձառու մարդկանց աշխատանքով կարող ենք ապահովել մեր երկրի բարգավաճ և անամպ ապագան ժողովրդավարական հասարակության մեջ:

Այս իմաստով բարեփոխումների այս շրջանում Եկեղեցու և հասարակական կազմակերպությունների համատեղ ջանքերով տարրական դպրոցում իրականացվող փոփոխությունները, միջին մասնագիտական կրթության բարելավումը և արտադպրոցական ուսուցման զարգացումը հիմնարար նշանակություն ունեն ապագա սերունդների համապատասխան և արդյունավետ կրթության համար: Հայաստանյան Կլոր Սեղանը կշարունակի իր ջանքերը գործադրել հանուն առավել արդյունավետ և ժամանակակից կրթական համակարգի՝ նկատի առնելով ավանդականը և մեր պատմական արժեքների պահպանումը:

Կարեն Նազարյան

**Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան
միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղանի հիմնադրամի
գործադիր տնօրեն**

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**Անհատի ձևավորման խնդիրն
արդի արժեհամակարգի և կրթության համատեքստում**

Աշխարհն այսօր այնքան արագ է զարգանում, որ մարդը կարծես չի հասցնում համապատասխան կեցվածք և դիրքորոշում ընդունել շատ ու շատ խնդիրների նկատմամբ: Գիտատեխնիկական աննախադեպ զարգացումն էականորեն փոխում է ոչ միայն մարդու կենսակերպը, այլև կյանքի որակն ու մակարդակը, ինչը, սակայն, այդչափ մտահոգիչ չէ, որքան այն իրողության գիտակցումը, որ աստվածամասն մարդը՝ բնության և արարածական աշխարհի թագն ու պսակը, այլևս նույն պատվին ու բարձրությանը չէ. մարդու ստեղծածն է, որ ղեկավարում և թելադրում է մարդուն իր անելիքը:

Հոռետեսական նրբերանգներ պարունակող այս մտքերը պետք չէ, որ վերջնական հուսալքման պատճառ դառնան: Ընդհակառակը, մենք համոզված ենք, որ միայն իրատես ու բազմակողմանի գնահատման դեպքում կարելի է ճիշտ և հեռանկարային եզրակացությունների հանգել, ինչի օգնությամբ միայն մարդկությունը կկարողանա ստեղծված բարդ ու հակասական թնջուկի ճիշտ հանգուցալուծումը գտնել:

Ուշադրություն դարձրեք այն փաստին, որ օգտագործում են «մարդկություն» հավաքական հասկացությունը և փոխարենը չեն խոսում այս կամ այն ժողովրդի, էթնիկ խմբի, հասարակության և կամ պետության ներքին դժվարությունների մասին: Եւ դա այն պատճառով, որ մերօրյա գլոբալիզացված աշխարհում խնդրահարույց դժվարությունները վտանգավոր ու վարակիչ ախտերի պես արագորեն տարածվում են և առկա են ամենուրեք: Ուստիև, համամարդկային այնպիսի գերխնդիրներ, ինչպիսիք են կրթությունն ու արժեհամակարգի ձևավորումը և կամ դրանց փոխազդեցությունը, ծնում են հարցեր, որոնք չունեն բոլորի համար ընդունելի պարզ ու միանշանակ պատասխաններ:

Ամենքիս էլ հասկանալի է թե՛ կրթական և թե՛ արժեքային համակարգերի անփոխարինելի դերակատարության կարևորությունը մարդ անհատի ձևավորման, նրա կայացման գործընթացում:

Սակայն այս գիտաժողովի բուն նյութին առնչվող առանցքային իմ հարցադրումը հետևյալն է՝ արդյոք ի՞նչ ենք մենք այսօր հասկանում կրթություն ասելով, ինչպիսի՞ վիճակում է այսօրվա արժեհամակարգը և հատկապես ի՞նչ ազդեցություն է թողնում այս ամենը մարդ անհատի ձևավորման գործում:

Կրթություն

Անհրաժեշտ է անմիջապես փաստել այն իրողությունը, որ այսօր խոսել կրթության մասին, բառիս դասական իմաստով, միանգամայն ժամանակավրեպ է և անիմաստ: Ինչպես ամեն բան, այնպես էլ կրթությունն ու կրթական համակարգը և դրանց մասին մեր ըմբռնումները զգալիորեն փոփոխվել են: Առանց խորամուխ լինելու կրթական արդի համակարգերի քննության մասնագիտական բարդ գործի մեջ՝ կարող ենք միայն արձանագրել, որ անցյալ դարի ակադեմիական կրթական համակարգը, որի ուժեղագույն կողմերից մեկը, անտարակույս, կարելի է համարել տարբեր առարկաների ամբողջացումը, այսպես ասած, ընդհանուր գիտելիք կադապարի մեջ, այսօր այլևս անցյալի մի հուշ է: Մերօրյա գրեթե բոլոր կրթահամակարգերն օժտված են միևնույն խտանով, որ է՝ ներքին մասնատվածությունը: Այն հանգեցնում է մի շատ զավեշտալի իրավիճակի, երբ կյանքի շեմին կանգնած երիտասարդն ունի բազում մասնավոր գիտելիքների պաշար, սակայն ընդունակ չէ կատարելու դրանց համադրումն ու առավելագույն վերացարկումը, այն է՝ փոքրիկ մասերից ստանալ ընդհանուր և վերջնական խճանկար: Գիտական շրջանակում այս երևույթը ծանոթ է «մտավոր կարճատեսություն» անունով:

Այսօր տեղի են տվել նաև կրթական այնպիսի ավանդական լծակներ, ինչպիսիք են ընտանիքը, միջավայրը և հասարակությունը: Մեր օրերում ավելի ու ավելի տարածում է ստանում մի տեսակ պապիվ և աննպատակային ինքնակրթությունը, իբրև առանցք ունենալով այն փորձառությունների ու գիտելիքների ամբողջությունը, որը հանրամատչելի է դառնում զանգվածային լրատվամիջոցների՝ հեռուստատեսության, ռադիոյի, պարբերական մամուլի և համացանցային հզոր ներուժի իրականացրած ակտիվ քարոզարշավի միջոցով:

Ուստիև, նման վիճակում հաճախ ականատես ենք դառնում մի երևույթի, երբ ընտանեկան դաստիարակի դերը ստանձնում են հեռուստատեսային «դիդակտիկ» սերիալները, կրթական հարցերով «լրջորեն» զբաղվում են մի շարք հանրամատչելի ռադիո և հեռուստածրագրեր, իսկ գիտությունն առհասարակ փոխարինվում է տեղեկատվությամբ և այսպես շարունակ:

Ճշմարտության, ազատության, արդարության և համերաշխության արժեհամակարգի վրա հիմնված տեղեկատվությունը պետք է նպաստի անհատի և հասարակության ներդաշնակ և խաղաղ գոյակցությանն ու զարգացմանը: Սակայն երբեմն այն մարդուն առաջնորդում է ճիշտ հակառակ ուղղությամբ այն պարզ պատճառով, որ ոչ միշտ է հիմնվում վերոհիշյալ արժեքների վրա, այլ պարզապես հետապնդում է շատ որոշակի, նեղ, մասնավոր, պատվիրված և շահադիտական նպատակներ:

Արժեքային համակարգ

Այն օրվանից, երբ նիհիլիզմի հիմնադիր, գերմանացի փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեն իր հանրահռչակ «Չվարթ գիտություն» աշխատության մեջ առաջին անգամ գուժեց Աստծո մահվան լուրը, արժեքային համակարգի հիմքերը ամբողջովին խախտվեցին, և այս մասին խոսելը դարձավ չափազանց դժվար մի գործ: Յուրաքանչյուր արժեհամակարգ, տարբեր արժեքներ իր մեջ մեկտեղելուց բացի, ունի նաև համընդհանուր սկզբունքներ՝ սյուներ, որոնց վրա և հիմնվում է արժեքային նվիրապետությունը: Հիրավի, այդ համակարգի երկու ամենագլխավոր և ամրակուռ հիմնասյուները դարեր շարունակ եղել են Աստված և մարդը: Սակայն ինչպես Ռոմանո Գուարդինին է նշում իր «Մոդեռն ժամանակաշրջանի ավարտը» աշխատության մեջ. «Աստված կորցնում է իր տեղը, և նրա հետ իր տեղն է կորցնում նաև մարդը», որով Գուարդինին պարզում է, որ մարդու կյանքը սերտորեն առնչված է Աստծո կյանքի հետ: Եւ այն պահից, երբ Աստված մեռնում է, մեռնում է նաև մարդը, նա, ով «չկամենալով կրել Աստծո պատկերն ու նմանությունը, դառնում է մեքենայի պատկերն ու նմանությունը կրող մի էակ», - գրում է ռուս փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը «Մարդու ճակատագիրը ժամանակակից աշխարհում» գլուխգործոցի մեջ և ապա շարունակում, - «պատերազմն այլ բան չարեց, քան հաստատեց այն իրողությունը, որ մարդ անհատը դադարել էր ոչ միայն գերագույն արժեք, այլև ընդհանրապես որևէ արժեք լինելուց»:

Հասկանալի է, որ ներքին հավասարակշռություն չունեցող և ներդաշնակությունից զուրկ որևէ մի արժեհամակարգ չափազանց անկայուն է, անկանխատեսելի և անհուսալի: Աշխարհն ամեն անգամ վերաբժնորում, իսկ ավելի ճիշտ, արժեզրկում է այն ամենը, ինչն առ այսօր համարվում էին արժեքներ՝ սեր, գեղեցկություն, կյանք, ազատություն, ընկերություն, արժանապատվություն, հայրենասիրություն, ընտանիք, սրբություն և ի վերջո՝ մարդ և Աստված:

Մերօրյա արժեքային համակարգերը, իսկ դրանք ցավոք սրտի բազում են, և դրանցից յուրաքանչյուրը հավակնում է լինել միակն ու անկրկնելին, նմանվում են դրամատների կողմից սահմանվող արտարժույթի փոխարժեքների, որոնք մշտապես ենթակա են փոփոխության:

Իբրև հետևանք վերանում է ամենասկզբունքային հարցերի սահմանագիծը: Ինչպես կասեր Մայակովսկին՝ ո՞րն է ճիշտը և ո՞րն է սխալը, ո՞րն է բարին և ո՞րը՝ չարը: Օրինակ՝ ինչպե՞ս կարող են այսօր բողոքական շատ համայնքներ միասեռականությունը համարել ընդունելի, եթե ոչ՝ սուրբ, երբ մինչ այժմ այն համարվում է մեղք Եկեղեցու համար: Մտածենք ինքներս՝ ինչպե՞ս կարող է երեկվա խոսելին այսօր դառնալ ընդունելի, ի՞նչպես կարելի է այսօր անել բարիք՝ չբացառելով, որ վաղը այն կարող է դառնալ չարիք: Այսպես շարունակելով՝ իրավացիորեն հարց է առաջանում՝ այդ դեպքում ի՞նչ կարիք կա առհասարակ որևէ բան անելու: Եկեք համալրենք անտարբերությամբ

և ապատիայով տարված հոգնած մարդկանց շարքերը, չէ՞ որ ոչինչ իմաստ չունի: «Ունայնություն ունայնությանց. ամեն ինչ ունայն է» (Ժող. Ա 2), - ասում էր Ժամանակին Ժողովողը:

Եզրակացություն

Գալով գեկույցիս վերջնամասին՝ մի պարզ հարցադրում եմ ուզում անել: Ինչպիսի՞ կրթություն և ինչպիսի՞ արժեքային համակարգ ունենք այսօր և կամ կուզենայինք ունենալ ապագայում: Այո՛, ամեն մի կրթություն և ամեն մի արժեքային համակարգ ձևավորում է մարդուն և որոշ առումով նպաստում նրա կայացմանը: Սակայն ինչպե՞ս են ձևավորում և իբրև ի՞նչ են կայացնում. սա է հարցերի հարցը: Պետական քրեակատարողական հիմնարկների մարդիկ ևս կրթվել ու ձևավորվել են: Այս ամենը մեզ բավականաչափ հայտնի է:

Այսօր Հայաստանը և առհասարակ մարդկությունն ապրում է պատմական մի ժամանակաշրջան, երբ ականատես ենք մարդկային կյանքի ամենանշանակալի իրադարձություններից մեկի՝ նոր հասարակության հիմնարկերի սրբազան արարողությանը: Մի գործընթաց, որի ազդեցությունը հետագա ժամանակաշրջանում լինելու է ոչ միայն ակնհայտ, այլև՝ բախտորոշ:

Հետևաբար, եթե մեզ իսկապես մտահոգում է մեր հասարակության ապագան, ապա անհրաժեշտ է անհապաղ քայլեր ձեռնարկել կրթական համակարգի առկա կացությունը բարվոքելու համար՝ այն հնարավորինս սրբազրելով օտարամուտ, մեր իրականությանը բնավ չհամապատասխանող և մեր ազգային շահերից չբխող դրույթներից և համակարգերից, որոնք երիտասարդների մոտ, ի թիվս այլ ախտերի, առաջացնում են նաև «գոյաբանական ապակողմնորոշում» (existencial disorientation): Միաժամանակ անհրաժեշտ է կանգ առնել արժեքային համակարգի այնպիսի մի մոդելի վրա, որը լավագույնս կարտահայտի հայ տեսակի որակական և բնորոշ առանձնահատկությունները՝ ներառելով հայ ժողովրդի պատմությունն ու ընդհանուր քրիստոնեական արժեքները և գերազանցապես Հայոց Եկեղեցու հավատամքը՝ նախադրյալներ, որոնք դարեր շարունակ հայի գոյատևման միակ գրավականն են եղել և անտարակույս երաշխիքն են մեր լուսավոր ապագայի:

Քրիստոնեական դաստիարակություն

Քրիստոնեական դաստիարակությունը չպետք է ընկալել սահմանափակ կերպով: Այն ընդգրկում է ամեն մի երևույթ: Հաճախ քրիստոնեական դաստիարակությունն ընկալվում է զուտ որպես ծանոթություն Աստվածաշնչին, ծանոթություն Նոր Կտակարանին, Եկեղեցու պատմությանը: Բայց քրիստոնեական դաստիարակությունը, իմ խորին համոզմամբ, նաև հայրենասիրության դաստիարակություն է, իդեալների, արժեքային համակարգի ձևավորում և այլն: Այս ամենին անդրադառնալուց առաջ մենք պետք է նախևառաջ պատկերացնենք, թե ի՞նչ խնդիրներ են ծառացած այսօր մեր պետության, մեր ժողովրդի, մեր Եկեղեցու առջև, որովհետև առանց այդ խնդիրները պատկերացնելու չենք կարող մշակել ռազմավարություն: Իհարկե, գերագույն նպատակը միշտ և բոլոր ժամանակներում նույնն է՝ մարդու հոգու փրկագործության խնդիրը:

Մարդու նպատակն իր մեջ Աստծու նմանությունն ու պատկերը լիարժեք կերպով իրականացնելն է, Աստծուն նմանվելը, աստվածանալը, քանզի մեր Տերն ասում է. «Սովորեցե՛ք ինձանից» (Մատթ. ԺԱ 29): Հետևաբար, մեր նպատակն Աստծուն նմանվելն է, որովհետև մարդն Աստծու նմանությամբ և պատկերով է ստեղծված: Այս առումով քրիստոնեական դաստիարակությունը չափազանց կարևոր է:

Այսօր մի շարք խնդիրներ են ծառացած ողջ մարդկության առջև: Դրանցից առաջինն արժեքային համակարգի արմատական փոփոխությունն է: Մարդ արարածը դարձել է նյութապաշտության երևույթի մենք կարող ենք հանդիպել ամեն քայլափոխի: Նյութապաշտության տարածմանը նպաստում են թե՛ զանգվածային լրատվական միջոցները՝ հեռուստատեսությունը, ռադիոն, թե՛ կրթական համակարգը:

Խոսվեց մասնագիտական կողմնորոշման մասին: Մասնագիտությունը կարևոր է, բայց մի՞թե կարող է գոյատևել և լինել առողջ՝ բարձրակարգ արհեստավարժներից բաղկացած մի հասարակարգ, որը չունի կայուն բարոյական սկզբունքներ: Նման խնդիր մենք տեսնում ենք նաև զարգացած երկրներում: Եվ քրիստոնեական դաստիարակության նպատակն առաջին հերթին պետք է լինի արժեքային համակարգի վերականգնումը:

Մյուս կողմից, աշխարհում ինչ-ինչ ուժերի գործունեության հետևանքով տարածվել է մի շարժում, որը, ըստ էության, հեթանոսության վերահաստատումն ու վերականգնումն է աշխարհում: Անգամ ամենագարգացած երկրներում տեսնում ենք զարգացած, կիրթ մարդկանց, ովքեր

հետևում են ամենատարբեր մոգական գուշակությունների, օկուլտ երևույթների և հեշտությամբ ընկնելով այդ ծուղակը՝ արհամարհում են քրիստոնեական արժեքները, արհամարհում եկեղեցին: Գոյություն ունի «Նյու էյջ» շարժում, որը տարածվում է ամբողջ աշխարհում՝ ընդգրկելով ամենատարբեր աղանդներ, նաև հեթանոսական խմբավորումներ, ինչպիսիք են գաղտնագիտությունը (էզոտերիան) և այլն:

Հաջորդ խնդիրն այն է, որ մեր երկրում այսօր ստեղծվել է սպառողական հասարակություն, սպառողական մտածողություն: Այս մասին խոսվում էր դեռ խորհրդային տարիներին: Այդ տարիները ևս մեծապես նպաստեցին մեր հասարակության, մեր ժողովրդի սպառող դառնալուն: Փողոցում նետված պաղպաղակի թղթերը, ծխախոտի դատարկ տուփերը վկայում են մեր սպառող լինելու մասին: Հայաստանում գրեթե չկա մի գեղատեսիլ վայր, որ աղբանոցի վերածված չլինի: Այսինքն՝ մենք տերը չենք մեր երկրի, մենք տերը չենք մեր մշակույթի, մենք տերը չենք մեր պետության և մենք տերը չենք մեր Եկեղեցու: Եկեղեցի ասելով նկատի չունենք միայն հոգևորականներին: Եկեղեցին շատ ավելի լայն հասկացություն է: Մեր Եկեղեցին մենք բոլորս ենք: Մենք սպասավորներն ենք մեր Եկեղեցու: Ամեն մարդ, ով ծնվում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ավագանից, որդեգրվում է Աստծուն և դառնում է Եկեղեցու լիարժեք անդամ: Այդ իսկ պատճառով սա բոլորիս խնդիրն է, բոլորիս գործն է: Իսկ սպառող հասարակությունը զարգացում ունենալ չի կարող: Եթե մարդը միայն վերցնում է և փոխարենը ոչինչ չի ավելացնում, զարգացումը բացառվում է: Ապացույցներն ամենուր են:

Սպառողական հասարակություն ձևավորելուն նպաստում են հատկապես հեռուստատեսային գովազդները, որոնք մղում են մարդուն ավելի լավ ուտելուն, ավելի լավ խմելուն, ավելի լավ հագնելուն, ավելի լավ ինչ-որ բարիքներ ունենալուն: Եվ սա տպավորվում է հատկապես անպաշտպան մանկական հոգիներում: Այդ առումով այսօր Եկեղեցու դերն անփոխարինելի է մեր հասարակության համար: Եկեղեցու դերն անփոխարինելի է արժեքային համակարգի վերականգնման գործում: Ես չեմ խոսում ուրիշ երկրների մասին, քանզի մեր ցավը մեր երկիրն է, մեր ցավը մեր հայրենիքն է և մեր ժողովուրդը:

Եկեղեցու առաքելությունն առաջին հերթին քարոզչությունն է, Ավետարանի լույսը մարդկանց հոգիներին հասցնելը: Որովհետև Աստված լույս է, և այդ լույսը մարդիկ այսօր կորցրել են, խավարի մեջ խաբիսավում են և չգիտեն, որ կողմ գնալ, որ կողմ քայլել: Որպեսզի մարդը կողմնորոշվի, պետք է նրա առջև լույս վառել: Դա Եկեղեցու խնդիրն է. նախևառաջ հոգևորականներին և հետո՝ Եկեղեցու ամեն մի անդամի: Որևէ համայնքի ներկայացուցիչ, ով իրեն համարում է Եկեղեցու լիարժեք անդամ, ով մասնակցում է պատարագներին, ով հաղորդություն է ստանում Սուրբ Մեղանից, նա իր առաքելությունը չի կարող սահմանափակել միայն այդքանով:

Եկեղեցին կարևորագույն դեր ունի նաև իդեալների ձևավորման գործում: Ես հիշում եմ խորհրդային տարիները (ինքս էլ այդ տարիների

աշակերտ եմ եղել): Խորհրդային տարիներին մենք իդեալներ ունեինք: Ես միշտ մտածում եմ, թե ինչպե՞ս այդ իդեալները, որոնք մեծ մասամբ կեղծ էին, սուտ և արհեստական, այնուամենայնիվ, օգնում էին մեզ կողմնորոշվել կյանքում: Մենք, որ հետևում էինք այդ իդեալներին, չգիտեինք, որ դրանք կեղծ են, և ձգտելով մնանվել դրանց՝ փորձում էինք դառնալ ավելի լավը, քան էինք, փորձում էինք ավելի վեր բարձրանալ: Սակայն մեր իդեալներն ուղղակի փլուզվեցին, որովհետև կեղծ էին: Իսկ այսօր երիտասարդների, պատանիների մեջ մնան իդեալներ ընդհանրապես գոյություն չունեն:

Ես ծխական քահանա եմ և, բնականաբար, ամեն օր և ամեն ժամ շփվում եմ մարդկանց հետ, նաև երիտասարդների, պատանիների հետ: Հաճախ հարցնում եմ նրանց, թե ու՞մ կուզեին մնանվել: Պատասխանը գրեթե նույնն է՝ ինքս ինձ: Սա վերլուծության անհրաժեշտ շատ լուրջ խնդիր է: Կարծում եմ, որ «ինքս ինձ» պատասխանը մերժումն է այն հասարակարգի, այն դրվածքի, այն ընթացքի, որ ի վերջո ստեղծել ենք մենք: Որովհետև հասարակությունն այսօր հիմնված է բռնության, ուժի, փողի, կեղծ, ժամանակավոր, անցողիկ արժեքների վրա: Երիտասարդը բնագոյաբար, ենթագիտակցորեն մերժում է այս ամենը, որովհետև կարիքն ու մղումն ունի, կարոտն ունի արդարության, սիրո, ջերմության, որոնք չի ստանում հասարակությունից: Երիտասարդության մեջ ծնված ներքին ըմբոստությունն ու բողոքը նրան մղում են ամենատարօրինակ արարքների:

Մի դպրոց հանդիպման էի հրավիրված: Դասիլծում մոտ 600 երիտասարդ էր նստած: Չգիտեմ՝ ինչպես նրանց գրավել: Նրանց գլխին քարոզ կարդալը որևէ օգուտ չէր բերելու, ճիշտ հակառակը, որովհետև նրանք սովոր են քարոզների: Ծնողներն ասում են՝ մի՛ ծխիր, և նրանք ծխում են, ասում են՝ մի՛ խմիր, և նրանք խմում են, ասում են՝ մի՛ գողացիր, և նրանք գողանում են: Դատարկ, փուչ խոսքեր են: Բարեբախտաբար ինձ հաջողվեց գրավել այդ պատանիներին: Ես ասացի, որ ընդունում և հասկանում եմ նրանց ըմբոստությունը հանդեպ այն հասարակության և այն համակարգի, որ ստեղծել ենք մենք՝ մեծահասակներս: Սակայն բողոքը պետք է կառուցողական լինի, ըմբոստությունը պետք է հանգեցնի դրական փոփոխությունների: Հանդիպումից հետո նրանք մի քանի ժամ ինձ շրջապատել և հարցեր էին տալիս: Ամեն մի պատանի, ամեն մի երիտասարդ իր հարցն ունի տալու և կամենում է ստանալ այդ հարցի պատասխանը: Եվ նրանց իդեալների ձևավորման գործում անփոխարինելի դեր ունի Եկեղեցին:

Վերջերս կարդացի մի հոդված Իրանի մասին: Հոդվածագիրը նշում էր, որ Իրանում կրոնական իշխանության հաստատումից հետո շատերի կարծիքն էր, որ դա երկար չի տևելու: Բայց այն շարունակվում է երեսուն տարուց ավելի: Սա խոսում է այն մասին, որ կրոնը ոգի արթնացրեց այդ հիմնավոր ժողովրդի մեջ, խոսում է այն մասին, որ նույնիսկ այդ համակարգին դեմ անհատները պատրաստ են իրենց կյանքը զոհելու իրենց պետության, իրենց երկրի շահերի համար, այն, ինչը բացակայում է մեր մեջ: Այսօր հաճախ ենք լսում. «Ի՞նչ է,

զնամ սրանց համա՞ր կռվեն»: Ովքե՞ր են «սրանք»:

Մեր համոզմամբ իդեալներ ձևավորելու լավագույն ճանապարհը սրբերի վարքերի հրատարակությունն է: Մենք ունենք մեծագույն սրբեր, հերոսներ, ովքեր իրենց կյանքը զոհաբերել են հանուն ճշմարտության, հանուն լույսի, հանուն հավատի, հանուն ժողովրդի: Կարծում եմ՝ հրատապ անհրաժեշտություն է, որ ամեն հայ մարդու սեղանին դրված լինի սրբերի վարքը: Նրանցից պատանիները և երիտասարդները, ինչո՞ւ չէ նաև երեխաները կարող են մեծ օգուտ քաղել՝ ձգտելով նմանվել այս կամ այն սրբին: Ի վերջո, այս մասին խոսում է նաև մեր Տերը: Նա ասում է. «Կատարյալ՝ եղեք, ինչպես ձեր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե 48):

Ինչպես ասացի, քրիստոնեական դաստիարակությունն ընդգրկում ոլորտ է: Քրիստոնեական դաստիարակությունը պետք է մարդասիրություն սերմանի անհատի մեջ: Ինչպե՞ս կարող է մարդը սիրել իր հայրենիքը, եթե չի սիրում իր մերձավորին, իր առջև կանգնած մեկին: Ինչպե՞ս կարող է մարդը սիրել մերձավորին, եթե չի սիրում Աստծուն:

Մենք խոսում ենք խնդիրների մասին: Իսկ թե ինչպե՞ս դրանք պետք է լուծել, սա արդեն քննարկման չափազանց լուրջ հարց է: Ինչպե՞ս պետք է երեխաների հետ խոսել հավատքից, ինչպե՞ս պետք է երեխաների հետ խոսել Աստվածաշնչից: Արդյոք նրանց ճառեր և դասախոսություններ մատուցելն արդյունավե՞տ ճանապարհ է: Ես հաճախ եմ զրուցում իմ համայնքի պատանիների և երեխաների հետ, տղաների հետ նույնիսկ ֆուտբոլ եմ խաղում, նրանց առջև ներկայանում եմ որպես իրենցից մեկը, իրենց ընկերը և ոչ թե ամբիոնի մոտ կանգնած, վերևից նայող և բարի խրատներ տվող մի մարդ:

Քրիստոնեական դաստիարակությունը պետք է մարդու մեջ ձևավորի պատասխանատվության զգացում, որպեսզի մենք կարողանանք տեր լինել մեր երկրին: Որովհետև երկիր, հայրենիք, ընտանիք, լեզու, սրանք աստվածատուր բաներ են, որոնք մեզ ի վերուստ են տրված: Մենք այդ ամենն Աստծուց ենք ստացել, և մենք Աստծուց ստացած մեր տնտեսության համար պատասխանատու ենք: Բայց այսօր մեր փոքր հայրենիքում մենք հավատարիմ տնտեսներ չենք: Հավատարմությունը չափազանց կարևոր խնդիր է քրիստոնեական դաստիարակության համար:

Հայրենասիրություն...: Հայրենասիրությունը վերացական չի կարող լինել: Այն համայնքում, որտեղ ես ի պաշտոնե հոգևոր հովիվ եմ, հաճախ կազմակերպում ենք ուխտագնացություններ: Հոգ չէ, որ դրանք ավելի հաճախ նմանվում են էքսկուրսիաների և հոգևոր լիցք առանձնապես չեն կրում: Թեև կան նաև մարդիկ, որոնք իրենց աղոթական կեցվածքով օրինակ են ծառայում մյուսներին: Այդ ուխտագնացությունների ժամանակ մարդիկ ճանաչում են իրենց հայրենիքը, իրենց արժեքները, իրենց լքված և ավերված տաճարներն են տեսնում: Մասնակից դառնալով ուխտագնացությունների՝ նրանք պատասխանատվություն են զգում իրենց ունեցած ժառանգության

հանդեպ: Այս հարցում մեծագույն դեր ունեն նաև մեր մտավորականները: Սակայն հազվագյուտ են այն մտավորականները, ովքեր քրիստոնեական արժեքների կրող են: Հիշենք սուրբ Մովսես Խորենացու «Ողբը», հիշենք Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը: Այս հիվանդությունը վաղուց է, հնուց է գալիս: Ռուբեն Սևակն ասում էր. «Երբ գլուխը հիվանդ է, մարմինը անկանոն շարժումներ է անում»: Չէ՞ որ մտավորականությունը միշտ եղել է որպես օրինակ ժողովրդի առջև:

Ինչ վերաբերում է մեր ծխին և ծխական գործին, ապա այն առաջին հերթին աշխատանք է ընտանիքների և անհատների հետ: Մեր եկեղեցում շատ են երեխաները: Ես երեխաներին եկեղեցի բերելու պահանջ եմ դնում ծնողների առջև, որպեսզի նրանք մասնակցեն պատարագներին և հաղորդություն ստանան: Բայց նաև արգելում եմ բռնանալ երեխաների վրա, ստիպել նրանց անշարժ հետևել ողջ պատարագին: Եվ չկա այնպիսի ծնող, ով կստիպի երեխային երկու ժամ պատարագի մասնակցել:

Որևէ մեկը թող իրեն չխաբի, որ միայն մոմ վառելով կարող է իրեն քրիստոնյա համարել: Առանց հաղորդության քրիստոնեություն լինել չի կարող, և պատարագն այդ առումով քրիստոնյա մարդու աստվածաշնորհության գերագույն կետն է: Երեխաները գալիս են, երեխաները ազատ են զգում իրենց, եկեղեցին դառնում է երեխայի համար սիրելի մի վայր: Չափազանց կարևոր եմ համարում հաղորդություն ստանալը երեխաների թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր առողջության համար: Սա քրիստոնեական դաստիարակության կարևորագույն խնդիրն է:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Մարինե Հակոբյան
ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի
հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ - գլխավոր մասնագետ

Կրթության համակարգի իրավական կարգավորումը. հնարավորություններ և խնդիրներ

Կրթության և ուսուցման գործընթացը մարդկության զարգացմանը համընթաց ևս զարգացել է, որտեղ էական ազդեցություն է ունեցել հոգևոր-մշակութային ու կրոնական գաղափարախոսությունը: Կրթությունը, ինչպես և կյանքի մյուս ոլորտները, իրականացվել ու կառավարվել է Եկեղեցու և հոգևոր դասի կողմից:

Մարդկության պատմության ու ժողովրդագրության հոլովություններում կրթա-մշակութային դրսևորումներն արհեստագործության, արվեստի և գիտության տարբեր ճյուղերի առաջացմամբ աստիճանական զարգացում են ապրել: Մեր նախնիները, իրենց իմաստությունն ու հոգևորը ներդնելով սերունդների կրթության ու դաստիարակության գործում, ձևավորել, կուտակել, հղկել, պահպանել և որոշակի կանոնակարգմամբ մեզ են փոխանցել սերունդներին կրթելու և երկրի քաղաքացիներ դաստիարակելու առաքելությունը:

Այսօր էլ կրթության պետական քաղաքականությունը, որ համարվում է Հայաստանի երրորդ Հանրապետության զարգացման գերակա ուղղություն և ազգային անվտանգության հիմք, արմատական բարեփոխումների է ենթարկվում, որոնց սկզբունքները և ուղղությունները սահմանվում են համապատասխան իրավական ակտերով և ծրագրերով: Այդ բարեփոխումների շրջանակներում նշանակալի կարող են լինել նաև Եկեղեցու, պետական կառույցների, գործատուների, ՀԿ-ների, մասնավոր և միջազգային կազմակերպությունների փոխհամաձայնեցված գործողությունները, կրթության և ուսուցման ծրագրերի համագործակցված իրականացումը, ֆինանսական ներդրումների նպատակայնությունը՝ համարվելով կրթության որակի բարելավման երաշխիք:

Ցավոք, Եկեղեցին դեռևս բավականաչափ ներգրավված չէ կրթության ոլորտում տեղի ունեցող գործընթացներին: Մինչդեռ Ազգային դպրոցի կայացման, հայապահպանության, երեխայի արժեքային համակարգի ձևավորման և հատկապես սոցիալական գործընկերության հարաբերություններում Եկեղեցին պետք է փորձի գտնել իր մասնակցության ձևն ու դրսևորումները՝ շեշտը դնելով արտադպրոցական կամ լրացուցիչ ուսուցման ու արհեստագործական կրթության, ինչպես նաև հասարակության խոցելի խմբերի

ու դժվարին իրավիճակում հայտնված անձանց, հատկապես երեխաների հետ տարվող աշխատանքների վրա: Այդ ամենի համար բավարար պայմաններ է ստեղծում նաև օրենսդրական դաշտը:

Ասվածը հիմնավորելու համար փորձենք կրթության և սոցիալական ոլորտի իրավական դաշտը դիտարկել Եկեղեցու հետ համագործակցության հնարավորության կտրվածքով:

Մեր օրերում կրթությունը կրում է աշխարհիկ բնույթ: Սակայն շարունակվում է կարևորվել Ազգային Եկեղեցու դերը:

Դրա մասին է վկայում ՀՀ Սահմանադրության 8.1 հոդվածում ամրագրված հետևյալ դրույթը.

«Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը՝ հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով»:

Նշված օրենքի ընդունումը շատ չուշացավ: 2007 թվականին ՀՀ ԱԺ-ն ընդունեց «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների առանձնահատկությունների մասին» օրենքը, որում ևս մեկ անգամ անդրադարձ է արված կրթության ոլորտում Ազգային Եկեղեցու դերին և մասնակցության հնարավորությանը, հատկապես՝ հանրակրթության իրականացման գործում: Օրենքում մասնավորապես սահմանված է՝

1. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին իրավունք ունի՝

ա) հիմնելու կամ հովանավորելու նախադպրոցական, տարրական, միջին, ավագ դպրոցներ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան,

բ) մասնակցել պետական կրթական հաստատություններում «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրերի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը և դպրոցներին ներկայացնելու այդ ուսուցիչների թեկնածությունները,

գ) պետական կրթական հաստատություններում կամավոր ուսումնական դասընթացներ կազմակերպելու՝ օգտագործելով դրանց շենքերն ու ռեսուրսները՝ այդ հաստատությունների հետ համաձայնեցնելով դասընթացների իրականացման հետ կապված խնդիրները,

դ) նպաստել հասարակության հոգևոր կրթությանը կրթական հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով:

2. Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու ստեղծած ուսում-

նական հաստատությունները պետք է ստանան այն աջակցությունը, որ պետությունը ցուցաբերում է մասնավոր հաստատություններին:

3. Պետությունը երաշխավորում է կրոնական կրթության իրավունքի իրացումը կամավորության հիման վրա»:

Շարունակելով վերջին դրույթը՝ հարկ է շեշտել, որ խոսքը վերաբերում է կրոնական կրթությանը, ինչը կարող է լինել կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս, այլ ոչ թե կրոնական գործունեությանը, որն ուղղակիորեն առնչվում է կրոնական կազմակերպությունների հետ՝ ներառելով նաև քարոզչություն, այս կամ այն դավանանքի տարածում և այլն:

Անդրադառնալով օրենքի վերոհիշյալ դրույթներին՝ ակներև է, որ օրենքի 1-ին մասի «ա» կետից դուրս է մնացել նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունը (ՈւՀ), իսկ «միջին մասնագիտական» եզրի փոխարեն օգտագործվել է «միջնակարգ մասնագիտական» եզրը, ինչը կարող է շփոթություն առաջացնել: Սակայն դրանք, ըստ էության, տեխնիկական վրիպակներ են, և հուսանք, որ չեն ազդի Ազգային Եկեղեցու և մասնագիտական կրթության՝ իբրև ամենամատչելի ու մասսայական ոլորտի միջև համագործակցության կայացմանը:

Ինչ վերաբերում է «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի ուսումնական ծրագրի մշակմանը Եկեղեցու մասնակցությանը, ապա այստեղ նույնպես նկատելի է ոչ ճիշտ ձևակերպում, քանի որ «առարկայի ուսումնական ծրագիր» հասկացությունը օրենսդրությամբ սահմանված չէ: Խոսքը վերաբերում է առարկայական չափորոշիչին:

Անդրադառնալով «Կրթության մասին օրենք»-ի (ընդունվել է 1999 թ.) 3-րդ հոդվածին, համաձայն որի «Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր եւ մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային եւ համամարդկային արժեքների պահպանմանը եւ զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ Եկեղեցին»: Վերջինիս տեսանելի հետևանքը եղավ այն, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվեց «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը: Հուսանք, որ Հայ Եկեղեցու կողմից բերվող նպաստն այսքանով չի սահմանափակվի, հատկապես, որ օրենսդրությունն իրավական այլ հնարավորություններ էլ է ընձեռում:

Համագործակցության եզրերն առավել պատկերավոր դարձնելու նպատակով փորձենք առավել մանրամասնորեն ներկայացնել կրթական ծրագրերի սկզբնական ու հիմնական բաղադրիչի՝ հանրակրթության համակարգի հիմքերը:

Ընդհանրապես ցանկացած մակարդակի կրթության հիմքը կրթական ծրագիրն է՝ անկախ դրա կազմակերպման և ուսումնառության ձևից, իրականացման վայրից կամ իրականացնող կազմակերպությունից: Այստեղ էականը պետական կրթական, առարկայական կամ մասնագիտական չափորոշիչների ապահովումն է: Սակայն կրթական յուրաքանչյուր մակար-

դակի ծրագիր հիմնական (այսինքն՝ պետական պարտադիր) լինելուց բացի կարող է նաև լրացուցիչ լինել: Համաձայն «Կրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի՝ հանրակրթական հիմնական ծրագրերը ներառում են՝

1. նախադպրոցական կրթությունը,
2. տարրական ընդհանուր կրթությունը,
3. հիմնական ընդհանուր կրթությունը,
4. միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը,
5. հատուկ ընդհանուր կրթությունը:

Լրացուցիչ կրթական ծրագրերը (հանրակրթական և մասնագիտական) նպատակաուղղված են հիմնական ծրագրերից դուրս սովորողների և մասնագետների կրթական պահանջների բավարարմանը և նրանց որակավորման բարձրացմանը:

Ինչպես նկատելի է, լրացուցիչ կրթությունը մայր օրենքում սահմանված է բավականին ընդհանուր բնորոշմամբ և վերաբերում է թե՛ հանրակրթության և թե՛ մասնագիտական կրթության համակարգերին: Հանրակրթությանը լրացնելու է գալիս նաև արտադպրոցական դաստիարակությունը, որի նպատակն է սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով պայմաններ ստեղծել նրանց հետաքրքրությունների զարգացման համար: Այն նպատակաուղղված է սովորողի հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմաօդային և արտակարգ դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:

Վաղ հասակից կրթությունը և մասնագիտական կողմնորոշումը ստեղծում են նախադրյալներ երեխայի ինքնուրույն և անկախ ապագայի, անձի արժևորման համար:

Զարգացող և առաջընթացի ձգտող երկրներում բոլոր տիպի կրթական և ուսուցողական ծրագրերի համապատասխան չափորոշիչներն ամբողջացվում են, երբ համապատասխան գիտելիք ձեռք բերելուց բացի, հիմքեր են ստեղծվում նաև երեխայի հմտությունների և կարողությունների բացահայտման, զարգացման, արժեքային համակարգի ձևավորման, շուկայական տնտեսական համակարգ ունեցող երկրի պարագայում նաև՝ մասնագիտական կողմնորոշման համար: Նշված սկզբունքներով է կառուցված Հանրակրթության պետական կրթակարգը, ինչը, սակայն, վերաբերում է հիմնական ծրագրերին: Լրացուցիչ կամ արտադպրոցական դաստիարակության սկզբունքներն ըստ էության դեռևս վերանայման կարիք ունեն: Օրինակ՝

1. «Արտադպրոցական ուսուցումը հանրակրթական ընդհանուր ծրագրերից դուրս երեխայի ազատ ժամանցի կազմակերպման միջոցով, սովորողի նախասիրություններին և հետաքրքրություններին համապատասխան, ուսուցման գործընթաց է, որը նպատակաուղղված է նրա կարողությունների և հմտությունների բացահայտմանը, դրանց

կատարելագործմանը, հոգեւոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական, քնապահպանական կիրառական գիտելիքների ձեռքբերմանը, մասնագիտական կողմնորոշմանը:

2. Արտադպրոցական ուսուցումն իրականացվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում կամ հանրակրթական ծրագրեր իրականացնող այլ կազմակերպություններում, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոններում, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներում, մարզադպրոցներում, ճամբարներում, արտադպրոցական ուսուցում իրականացնող այլ կազմակերպություններում»:

Թե ինչպես կարող է Եկեղեցին իր մասնակցությունն ունենալ հանրակրթության հիմնական ծրագրերի մշակման ու իրագործման գործում, արդեն խոսվել է վերևում: Կարծում ենք՝ համագործակցության և առանձին գործունեության իրական հնարավորություններ են ստեղծված լրացուցիչ և հատկապես արտադպրոցական ուսուցման ոլորտներում, որտեղ Եկեղեցու դերը էական կարող է լինել անձի արժեքային համակարգի ձևավորման գործում:

Յավոք, հասարակության մեջ դեռևս կան սոցիալական տարբեր կարգավիճակում գտնվող անձինք կամ խոցելի խմբեր, ներառյալ՝ երեխաներ, որոնց կրթության իրավունքը կամ հնարավորությունը տարբեր պատճառներով սահմանափակ է: Նրանք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք են՝ հաշմանդամներ, բռնությունների զոհ դարձած, առանց ծնողական խնամքի կամ ծնողագուրկ (միակողմանի, երկկողմանի), հակասոցիալական վարք դրսևորած կամ ազատության սահմանափակման մեջ գտնվող երեխաներ և ուրիշներ:

2005 թվականին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» օրենքում սահմանված են թե՛ «կյանքի դժվարին իրավիճակ» և այդ «իրավիճակում հայտնված անձ» հասկացությունները և թե՛ նրանց տրամադրվող օգնության ձևերը: Սակայն այս սահմանումներին չէ, որ ուզում են անդրադառնալ: Համաձայն նշված օրենքի՝ ներդրվել է «սոցիալական աշխատողի» ինստիտուտը: Այն սոցիալական, մարդասիրական ծառայություններ մատուցող անձանց կարգավիճակն է, որին կարող է հավակնել եկեղեցապատկան կառույցների զգալի մասը:

Հղում անենք նաև այլ օրենքների, որոնք կհամալրեն վերն ասվածը:

Համաձայն «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի՝ հաշմանդամ անձանց կամ առանց առանձնահատուկ պայմանների կրթություն ստանալու դժվարություններ ունեցող անձանց համար իրենց կամ նրանց օրինական ներկայացուցիչների ընտրությամբ հնարավոր է իրականացնել կրթություն ներառական, տնային ուսուցման կամ վարպետային ուսուցման ձևերով: Նշված բոլոր ձևերն էլ օրենքով սահմանված կարգով պետության կողմից ճանաչվում են որպես համապատասխան մակարդակի կրթական ծրագրի իրականացման ձև:

Փորձենք հստակեցնել և գտնել համագործակցության եզրերը:

Ներառական կրթությունն իրականացվում է հանրակրթական և մասնագիտական ՈւՀ-ներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈւ) անձանց և դրանց կարիքը չունեցող անձանց համատեղ ուսումնառության ձևով՝ ապահովելով կրթության առանձնահատուկ պայմանները:

Համաձայն օրենքի՝ ԿԱՊԿՈւ անձն անհրաժեշտության դեպքում իրավունք ունի օգտվել օգնականի ծառայությունից, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հնարավորություն է ընձեռում այդ հարաբերությունները կառուցել պայմանագրային հիմունքների վրա՝ որպես ֆիզիկական անձի կողմից ֆիզիկական անձին մատուցած ծառայություն:

Տնային ուսուցումը կազմակերպվում է առողջական վիճակի պատճառով ուսումնական հաստատություններ ժամանակավորապես կամ մշտապես հաճախել չկարողացող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար: Ուսուցումն իրականացնում է տվյալ անձի մշտական ուսումնառության վայրի ուսումնական հաստատությունը կամ այդ անձի բնակության վայրին առավել մոտ գտնվող պետական, հավատարմագրված համապատասխան ուսումնական հաստատությունը, ինչպես նաև անհատական մասնագիտական ուսուցում իրականացնող և համապատասխան արտոնագիր ունեցող վարպետը՝ եռակողմ պայմանագրի հիման վրա:

Հաշմանդամ երեխաների պարագայում արտադպրոցական դաստիարակության կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության կազմակերպմանը եկեղեցապատկան կառույցների մասնակցությունը կնպաստի այդ երեխաների ինքնուրույնության ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, սոցիալիզացման խորացմանը, նրանց հնարավորություն կտա հետագայում օգտակար լինել թե՛ հասարակությանը, թե՛ սեփական ընտանիքին:

Անհրաժեշտ է ուսուցման հիմք ընդունել այն արհեստները և արվեստները, որոնց միջոցով հնարավոր կլինի զարգացնել բնակչության խոցելի խմբերի ունակություններն ու հմտությունները՝ հետագայում հասարակության մեջ նրանց առավել արդյունավետ և շահավետ կերպով ներգրավելու համար: Ապագայում աշխատանքով ապահովված լինելու միտքը երեխաներին լավատեսություն և ինքնավստահություն է հաղորդում, հասարակության և ընտանիքի համար բեռ լինելու փոխարեն պիտանի լինելու գիտակցությունը օգնում է ազատվել իր անձի նկատմամբ անլիարժեքության բարդույթից: Իսկ եթե դրան հավելենք հոգևոր կրթությունը, ապա արդյունքն անհամեմատ բարձր ու աստվածահաճո կլինի:

Հայտնի է, որ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգն ավելի արագագործ է, քանի որ մասնագետ է պատրաստում կարճ ժամկետներում: Այն ճկուն է, քանի որ

անմիջապես արձագանքում է շուկայի անընդհատ փոփոխվող պահանջներին և մատչելի է ցածր եկամուտ ունեցող խավերի համար:

Մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում պետական քաղաքականությունը պետք է ունենա երկու ուղղվածություն: Առաջինը՝ ինչպես մատուցել ծառայություններ, որոնք կբավարարեն այսօրվա կարիքներին, և երկրորդ՝ մշակել քաղաքականություն՝ միտված ապագա կարիքների բավարարմանը:

Հետևաբար, ուսումնական հաստատությունները և շահագրգիռ կազմակերպությունները պետք է նույն տրամադրվածությամբ և պատրաստականությամբ դիտարկեն հանրային կարիքները, որոնց թվում՝ խոցելի խմբերի, աշխատաշուկայի առկա վիճակը: Նրանք պետք է նաև կանխատեսեն ապագան՝ հիմք ընդունելով պետական քաղաքականությունը, միջազգային համագործակցության և պայմանագրերի ընձեռած հնարավորությունները, միջնաժամկետ ծրագրերը, ձեռներեցության ռազմավարությունը, հասարակական սեկտորի հնարավորությունները, կոնկրետ գործատուի մենեջմենթը, շուկան և սոցիալ-տնտեսական զարգացումները:

Կրթական ծառայությունների մատուցումը կարելի է սահմանել որպես ձևափոխվող (տրանսֆորմացիոն) գործընթաց, որի ընթացքում որոշակի ռեսուրսներ ձևափոխվում են և համապատասխանեցվում որոշակի պահանջների բավարարմանը:

Սակայն այս ընկալումը դեռևս չի ամրապնդվել գործընկերության կողմ հանդիսացող անձանց շրջանում: Այսպես օրինակ՝ ուսումնական հաստատություններին հիմնականում չի հետաքրքրում իրենց շրջանավարտների հետագա ճակատագիրը, մասնագիտական հաջողությունները: Հետադարձ կապի բացակայությունը շրջանավարտի և մասնագիտական ուսումնական հաստատության միջև հանգեցնում է նրան, որ մասնագիտական գիտելիքներ մատուցող կազմակերպությունը փորձ չի անում հասկանալու աշխատաշուկայի և գործատուի կողմից մասնագետներին ներկայացվող պահանջները, կրթություն է իրականացնում հանուն կրթության, այլ ոչ մասնագետի՝ աշխատաշուկայում մրցունակ լինելու և աշխատանքային տեղ ապահովելու համար:

Հակառակ դրան՝ զբաղվածության բնագավառներում պետական քաղաքականությունը կառուցված է սոցիալական գործընկերության և ըստ պահանջարկի սկզբունքների կիրառմամբ, իսկ զբաղվածության և գործազրկության վիճակագրությունը կազմվում է հիմք ընդունելով՝

ա. մասնագիտական ուսուցման համակարգի կողմնորոշումը՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան,

բ. աշխատուժի ազատ տեղաշարժի (ներքին և արտաքին) ապահովումը,

գ. սոցիալական գործընկերությունը:

Ենթադրաբար շուկայի համար մասնագետ պատրաստող մասնագիտական կրթության և ուսուցման կազմակերպությունները պետք է հետևեն այդ վիճակագրությանը:

Համաձայն «Բնակչության զբաղվածության և գործազրկության սոցիալական պաշտպանության մասին» օրենքի՝ մասնագիտական կրթություն չունեցող գործազուրկ անձանց նպատակահարմար է այն աշխատանքը, որը պահանջում է մինչև վեց ամիս ժամկետով նախնական մասնագիտական պատրաստում և արհեստագործական ուսուցում: Դրանից հետևում է որ, եկեղեցապատկան ուսումնական կենտրոնները կարող են լուրջ անելիքներ ունենալ կարճատև մասնագիտական ուսուցում կազմակերպելու առումով:

Հարկ է նշել, որ բացի ուսումնական հաստատություններից կրթության և ուսուցման գործընթացներ կամ կրթական ծրագրեր կարող են իրականացնել նաև այլ կազմակերպություններ: Ըստ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի՝ «Արհեստագործական կրթությունը եւ ուսուցումը իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, քոլեջներում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, կազմակերպությունների ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում, համապատասխան լիցենզիա ունեցող եւ անհատական մասնագիտական ուսուցում իրականացնող վարպետների մոտ»: Բոլոր այս հաստատությունները կարող են դիտարկվել որպես մրցակիցներ, սակայն կարելի է նաև հասնել դրանց համագործակցությանը:

Ուշագրավ է հատկապես քրեակատարողական հիմնարկներում արհեստագործական կրթության կազմակերպման հանգամանքը: Այդ նորմի նպատակն է ազատագրված մեջ գտնվող և հետագայում հանրային կյանք վերադարձող մարդկանց համար ստեղծել սոցիալականացման հնարավորություն՝ ձեռք բերած մասնագիտության միջոցով ունենալ որոշակի զբաղվածություն: Օրենքը թույլ է տալիս հոգևորականին անարգել գտնվել ազատագրված վայրերում, ինչը կարող է դառնալ հետագա համագործակցության ձևավորման միջոց:

Այս պայմաններում Եկեղեցին և իր ենթակայության տակ գտնվող ուսումնական կենտրոնները, հանդես գալով սոցիալական գործընկերության հարաբերություններում, նախաձեռնելու և արդյունավետ համագործակցություն իրականացնելու մեծ հնարավորություն ունեն: Այսպես օրինակ՝

1. գործատուներից (առանձին դեպքերում նաև օտարերկրյա պետությունների) և զբաղվածության վերաբերյալ տեղեկություններ տրամադրող այլ մարմիններից տեղեկություններ ստանալ թափուր աշխատատեղերի, ինչպես նաև սպասվելիք կառուցվածքային փոփոխությունների և այլ միջոցառումների մասին, որոնց հետևանքով կարող են տեղի ունենալ աշխատանքից ազատումներ,

2. ուսումնասիրել արտոնագրման (օրինակ՝ ուղեկցողներ) և կամ

ատեստավորման (օրինակ՝ մանկավարժներ) ենթակա գործունեության տեսակները, դրանցից յուրաքանչյուրին ներկայացվող պահանջները, դրանց ընդհանուր առանձնահատկությունները,

3. աշխատանք փնտրող անձանց «գործուղել» գործատուների մոտ՝ համապատասխան թափուր աշխատատեղերի առկայության դեպքում, դրա լավագույն ձևը և միջնորդավորման կերպը պայմանագրային համագործակցությունն է գործատուների, ուսումնական հաստատությունների և ուսումնական կենտրոնների միջև,

4. իրականացնել կրթության զարգացմանը նպաստող ծրագրեր, ապահովել ուսումնառողների կամ ունկնդիրների մասնակցությունն այդ ծրագրերում,

5. իրականացնել մեծահասակների կրթության և ուսուցման ծրագրեր,

6. ունկնդիրներին և շրջանավարտներին նախապատրաստել գործարար հաղորդակցության համար,

7. իրականացնել շրջանավարտների տեղաշարժի կարգավորմանն ուղղված միջոցառումներ, աշխատանք փնտրող շրջանավարտներին և ունկնդիրներին աջակցել աշխատանք ընտրելու հարցում, գործատուներին ապահովել անհրաժեշտ մասնագիտություն և որակավորում ունեցող մասնագետներով,

8. կազմակերպել գործազուրկների մասնագիտական ուսուցում,

9. կազմակերպել հաշմանդամների մասնագիտական ուսուցում,

10. աջակցել վարձատրվող հասարակական աշխատանքների, առանձին միջոցառումների կազմակերպմանը՝ ապահովելով անհրաժեշտ աշխատուժ,

11. միջոցներ ձեռնարկել ներառական կրթություն և ուսուցում իրականացնելու համար և այլն:

Դեռևս սակավ են մման աշխատանքներին Եկեղեցու մասնակցության նախադեպերը, և բավարար չափով կայացած չէ Եկեղեցի, գործատու և ուսումնական հաստատություն կապը, այլ կերպ ասած՝ սոցգործընկերությունը և համագործակցությունը: Պետք է նշել, սակայն, որ իրավական դաշտը լիովին տալիս է այդ հնարավորությունը, միջազգային և տեղական փորձը, առկա նախադեպերը հավաստում են դրանց իրագործելիությունը: Պարզապես, հարկ է հանդես գալ նախաձեռնողի դերում և կարողանալ արդյունավետ օգտագործել համագործակցության հնարավորությունը:

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Արտակ Աղբալյան
ՀՀ Կրթության և գիտության նախարարության
Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ

**Նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգը և նրա
բարեփոխման առկա իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում**

ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում էական նշանակություն ունի արհեստագործական և միջին մասնագիտական որակյալ ուսուցումն ու կրթությունը, որի ապահովումն ու մատչելիությունը հանրապետության տնտեսական աճի, աղքատության և սոցիալական անհավասարության մեղմացման կարևորագույն գործոններից մեկն է: Այսօր այդ բնագավառի հետագա զարգացումը, համաձայն ՀՀ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի», դիտվում է որպես ՀՀ տնտեսության առաջընթացի գերակայություններից մեկը, քանի որ տնտեսության մեջ տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների պայմաններում հատուկ կարևորություն են ստանում մասնագիտական հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի որակի բարձրացումն ու համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին: Առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների խնդիրները, որոնց լուծումը հնարավորություն կտա իրականացնել աշխատանքի շուկայի պահանջներին միտված ուսուցում՝ հատուկ ծրագիր նախատեսելով նաև երկարաժամկետ գործազրկության մեջ գտնվողների վերապատրաստման համար:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում գործում են բազմաթիվ պետական, հասարակական, միջազգային և մասնավոր կազմակերպություններ, որոնց կողմից իրականացվող ծրագրերի բաղադրիչներից գոնե մեկը կապված է կրթության՝ ուսուցման կազմակերպման կամ իրականացման հետ: Կրթական կամ ուսուցողական այդ ծրագրերը, հաճախ չունենալով հստակ ռազմավարական խնդիրներ, փոխադարձ կապ, համարյա հաշվի չառնելով տեղական աշխատաշուկայի առաջադրած պահանջները, որոշակիորեն նպաստում են երկրի տնտեսական զարգացմանը:

Հենվելով մինչ այժմ գոյություն ունեցող փորձի վրա՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունում տնտեսական զարգացման առավել մեծ արդյունքների կարելի է հասնել որոշակի պայմանների առկայության դեպքում: Դրանցից առավել նշանակալի կարող են համարվել պետական կառույցների, գործատուների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ), մասնավոր և միջազգային կազմակերպությունների փոխհամաձայնեցված

գործողությունների արդյունքով կրթական և ուսուցման ծրագրերի համագործակցված իրականացումը, տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կազմումը, աշխատաշուկայի ուսումնասիրումը և մոնիտորինգը, կրթության որակի բարելավումը, ֆինանսական ներդրումների նպատակայնությունը: Այս պայմանների ապահովման նպատակով մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈ) միջոցով կարելի է իրականացնել տեղական զարգացմանը նպաստող մի շարք միջոցառումներ, որոնք աշխատաշուկայի ուսումնասիրման և մոնիտորինգի հիման վրա ՀՀ-ում կստեղծեն մասնագիտական կրթության և ուսուցման ժամանակակից և կոռ համակարգ, որն իր զարգացման միտումներով և առանձնահատկություններով լիովին համադրելի կլինի Արևմտյան Եվրոպայի համանման համակարգին:

ՀՀ մասնագիտական կրթության համակարգը ձևավորվել է դեռևս 20-րդ դարի սկզբին և իր գոյության ընթացքում տվել է հարյուր հազարավոր մասնագետներ, որոնք անգնահատելի դեր են կատարել Հայաստանի տնտեսության ստեղծման և զարգացման գործում: Հարմարված լինելով խորհրդային պետության պլանաչափ զարգացող տնտեսության առանձնահատկություններին՝ մասնագիտական կրթության համակարգը 20-րդ դարի 80-ականների վերջին հասավ իր զարգացման գագաթնակետին և կտրուկ վայրէջք ապրեց ու կորցրեց իր երբեմնի նշանակությունը՝ 90-ականների կեսերին սոցիալ-տնտեսական խոր ճգնաժամ ապրող այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն էր:

Այսօր Հայաստանում գործում է 2004-2005 թթ. վերաբացված կամ նոր հիմնադրված 27 արհեստագործական ուսումնարան, ինչպես նաև 16 քոլեջ, որտեղ ուսումնառություն է իրականացվում նախնական մասնագիտական շուրջ 20 մասնագիտության գծով՝ շուրջ 7000 ուսանողի համար: Ընդհանուր առմամբ, նախնական մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը, որը 2003թ. հաստատել է ՀՀ կառավարությունը, պարունակում է 217 մասնագիտություն և մասնագիտացում:

Մասնագիտական կրթության հաջորդ մակարդակը միջին մասնագիտական կրթությունն է, որի նպատակն է միջին մասնագիտական որակավորման կադրերի՝ մասնագետների պատրաստումը, ընդհանուր և մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումը, մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորումն ու ամրապնդումը: ՀՀ-ում ներկայումս միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում, ինչպես նաև առանձին բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ որպես միջին մասնագիտական կրթական ծրագիր:

Ներկայումս ՀՀ բոլոր մարզերում, բացառությամբ Արագածոտնի մարզի, գործում է 81 պետական և շուրջ 30 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն: Ուսումնական հաստատությունների հիմնական մասը՝ շուրջ 1/3-ը, կենտրոնացած է Երևանում (27 պետական և 15

ոչ պետական քոլեջ) ինչպես նաև՝ Գյումրիում և Վանաձորում: Ուսումնական այդ հաստատություններում սովորում է շուրջ 28 000 ուսանող:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում այսօր կադրեր են պատրաստվում ամենատարբեր մասնագիտությունների գծով, որոնց թիվն անցնում է 100-ից (ընդհանուր հաստատված 450-ից): Դրանք ընդգրկում են տնտեսագիտության, ինֆորմատիկայի, գյուղատնտեսության, թեթև և ծանր արդյունաբերության, առողջապահության, սպասարկման, շինարարության, տեխնիկայի և տեխնոլոգիաների, մանկավարժության, մշակույթի, հումանիտար և մի շարք այլ ոլորտներ:

Այսօր ՀՀ արհեստագործական ուսումնարաններում և քոլեջներում ուսանում են հիմնական ընդհանուր և միջնակարգ (ամբողջական) ընդհանուր կրթություն ունեցող ուսանողներ, որոնք այստեղ են գալիս նաև հանրապետության այլ մարզերից ու քաղաքներից: Առանձին դեպքում իրականացվում են նաև մասնագիտական վերապատրաստման կամ որակավորման բարձրացման դասընթացներ մեծահասակների համար, ինչը պարբերական բնույթ չի կրում:

Վերոնշյալ ուսումնական հաստատությունները հաճախ համագործակցում են մարզպետարանների, գյուղական համայնքների, տեղական ձեռնարկությունների կամ կազմակերպությունների հետ, որոնց կողմից ներկայացված պահանջարկի հիման վրա հաճախ ձևավորվում են այդ հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների ցանկը և ուսանողների քանակը: Մասնագիտական ուսումնական հաստատությունները համագործակցում են հանրակրթական դպրոցների հետ՝ դպրոցներում կազմակերպելով աշակերտների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ: Համագործակցում են նաև առանձին հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ, որոնք երբեմն ուսումնական հաստատություններում իրականացնում են դրամաշնորհային ծրագրեր:

Այսօր գիտելիքների վրա հիմնված տնտեսության զարգացումը դանդաղ է ընթանում: Սա խոչընդոտում է ՄԿՈՒ համակարգի բարեփոխումների իրականացմանը: Բացի խոչընդոտներից առկա են նաև ՄԿՈՒ համակարգի բարեփոխումների իրականացմանը նպաստող հանգամանքներ, որոնցից մեկը հմուտ բանվորների պահանջարկի աճն է: Սա ապացույցն է այն բանի, որ տնտեսությունը հիմնված է հենց մասնագիտական կրթության վրա: Այժմ երիտասարդության մեծ մասը նախընտրում է ստանալ բարձրագույն կրթություն՝ առանձնապես չկարևորելով նախնական և միջին մասնագիտական կրթությունը:

ՄԿՈՒ ներկայիս համակարգը գնահատելու համար Հայաստանի Հանրապետությունում մշակվել են հատուկ չափորոշիչներ, որոնք բացահայտում են Հայաստանում ՄԿՈՒ համակարգի 4 հիմնական խնդիրները:

Առաջինը՝ երիտասարդների և մեծահասակների համար ողջ կյանքի ընթացքում մասնագիտական կրթության և ուսուցման անբավարար

հնարավորությունն է:

Մասնագիտական կրթությունը մատչելի չէ երիտասարդներին, խոցելի և սոցիալապես անապահով խմբերի համար գոյություն չունի մասնագիտական կրթություն ստանալու համապատասխան համակարգ, թույլ է նախնական և միջին մասնագիտական կրթության համապատասխանեցումը և դրանց փոխկապակցվածությունը կրթության այլ մակարդակների հետ:

ՄԿՈՒ համակարգի երկրորդ խնդիրը ՄԿՈՒ-ի իրականացման ցածր որակն է:

Այսօր գրեթե բացակայում են նախնական և միջին մասնագիտական կրթության կրթական չափորոշիչները, իսկ գործատուների մասնակցությամբ իրականացվող կարողությունների վրա հիմնված մասնագիտական չափորոշիչների մշակման գործընթացը սահմանափակվում է ընդամենը մի քանի մասնագիտությամբ: Գործատուն շահագրգռված չէ իրեն հարմար որակյալ մասնագետ ստանալու համար որոշակի աջակցություն ցուցաբերել մասնագիտական ուսումնական հաստատություններին և սահմանել չափորոշիչներ, որոնցով էլ կառաջնորդվեն այդ ուսումնական հաստատությունները:

ՄԿՈՒ երրորդ խնդիրը կազմակերպական թույլ կառույցները և գործընկերության բացակայությունն են:

ՄԿՈՒ համակարգը հսկող գործառույթները հստակորեն սահմանված և պատշաճ կերպով բաշխված չեն, բացակայում են ուսումնական հաստատություններին կանոնավոր աջակցություն տրամադրող ենթակառուցվածքային կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները չունեն ակադեմիական, ֆինանսական և կառավարման հարցերում ինքնավարություն, իսկ սոցիալական գործընկերությունը ՀՀ-ում համարյա թե ձևավորված չէ:

ՄԿՈՒ հաջորդ խնդիրը ռեսուրսների ներգրավման, բաշխման և օգտագործման անարդյունավետությունն է:

Վերոգրյալ խնդիրները լուծելու նպատակով ՀՀ-ում մշակվել են ՄԿՈՒ համակարգի բարելավմանն ուղղված ռազմավարական հետևյալ գերակայությունները՝

1. մասնագիտական կրթության և ուսուցման՝ կարողությունների վրա հիմնված չափորոշիչների ներդրում,
2. որակի վերահսկման մեխանիզմների արդիականացում,
3. տեխնիկական աջակցության և որակի երաշխավորման ենթակառուցվածքի ստեղծում,
4. ծախսերի արդյունավետություն և կրթական արդյունքների (ելքերի) բարելավում,
5. ՄԿՈՒ ֆինանսավորման օպտիմալացում,
6. ՄԿՈՒ արդիականացման ու մոնիտորինգի ազգային հնարավորությունների ստեղծում:

Մատնանշված գերակայությունները համապատասխանում են ՀՀ կառավարության հավանությունն ստացած Հայաստանի ՄԿՈւ ռազմավարությամբ: Դրանք իրականացնելու համար առկա են անհրաժեշտ միջոցները:

ՄԿՈՒ համակարգի առաջին գերակայությունն է մասնագիտական կրթության և ուսուցման՝ կարողությունների վրա հիմնված չափորոշիչների ներդրումը:

Հայաստանում ՄԿՈւ համակարգն իրականացնում է ուսուցում՝ առանց հաշվի առնելու ներկայիս աշխատաշուկայի պահանջները: Այնինչ, այն պետք է ուսուցումն իրականացնի, հաշվի առնելով աշխատաշուկայում կատարվող բոլոր փոփոխությունները, և հիմնվի այդ չափորոշիչների վրա: Այն պետք է պատրաստի որակյալ մասնագետներ՝ համապատասխան գիտելիքներով, հմտություններով և մոտեցումներով, որոնք կբավարարեն ներկայիս գործատուի պահանջները: Այս ամենն իրականացնելու համար պետք է մշակվեն համապատասխան մոդեր կամ չափորոշիչներ: Այս մոդերը կամ չափորոշիչները պետք է մշակվեն պետության, կրթական ոլորտի ղեկավար մարմինների, կրթական հաստատությունների և ուսանողների պահանջների համաձայն: Կարողությունների վրա հիմնված ՄԿՈւ չափորոշիչը սահմանում է տվյալ աշխատանքից պահանջվող հմտությունները: Այս չափորոշիչները կարող են ուսուցման ծրագրերի, ուսումնական պլանների, մեթոդների և ուսումնառության տեխնիկայի մշակման հիմք դառնալ:

Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ նախնական և միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանները պետք է մշակվեն հենց իրենց՝ ուսումնական հաստատությունների կողմից: Առաջարկվում է մշակել կարողությունների վրա հիմնված չափորոշիչներ, որոնք կկապեն ՄԿՈւ համակարգը տնտեսական հատվածի հետ և ուսուցման շուկան՝ աշխատաշուկայի հետ: Անհրաժեշտ է նաև ՄԿՈւ որակավորումների համակարգի կառուցվածքը և չափորոշիչները դարձնել միջազգային պահանջների հետ համադրելի: Բայց քանի որ հայաստանյան աշխատաշուկան չի համապատասխանում միջազգային պահանջներին, ուստի դժվար է այն կապել ուսուցման շուկայի հետ և միաժամանակ ուսուցման շուկան դարձնել միջազգային պահանջների հետ համադրելի: Ենթադրվում է, որ նախնառաջ աշխատաշուկան պետք է համապատասխանի միջազգային պահանջներին և մշակի այդ պահանջներին համապատասխան չափորոշիչներ, որոնցով էլ կառաջնորդվի կրթական համակարգը:

ՄԿՈՒ համակարգի երկրորդ գերակայությունը որակի վերահսկման մեխանիզմների արդիականացումն է:

Որակի վերահսկման մեխանիզմները բարելավելու համար առաջարկվում է ներդնել որակի ստանդարտ պահանջներ՝ վերահսկող կազմակերպությունների և մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպությունների համար: Դրանք թույլ կտան խստա-

ցնել ուսումնական հաստատությունների որակի պահանջները, չափորոշիչներ ներդնել վերահսկող կազմակերպությունների համար, ուսումնական գործընթացի վերահսկման և գնահատման գործառնությունները դարձնել ավելի հստակ, թափանցիկ ու հետևողական: Բացի այդ, պետք է ներդրվի նաև որակի կառավարման հստակ սահմանված համակարգ առանձին ուսումնական հաստատությունների և կրթության ոլորտի ղեկավար մարմինների համար:

Առաջարկվում է ստեղծել վկայագրող մարմիններ, որոնք կիրականացնեն ուսումնական հաստատությունների հավատարմագրում, վարչական և մանկավարժական անձնակազմի գնահատում և վկայագրում, հավատարմագրման չափորոշիչների կիրառման մշտական մոնիտորինգ, սովորողների հմտությունների, գիտելիքների և մոտեցումների միջանկյալ ու վերջնական գնահատում:

ՄԿՈՒ հաջորդ գերակայությունը տեխնիկական աջակցության և որակի երաշխավորման ենթակառույցի ստեղծումն է:

ՄԿՈՒ որակի երաշխավորման վերաբերյալ առաջարկությունները մինչև այժմ կապված էին առաջատար մեխանիզմների ու սարքավորումների ներդրման հետ:

Հայաստանն այն եզակի երկրներից է, որտեղ բացակայում է պետության կողմից հովանավորվող մասնագիտական կրթության և ուսուցման տեխնիկական աջակցության և որակի երաշխավորման որևէ ծառայություն: Այս իրավիճակը շտկելու համար ՄԿՈՒ ռազմավարությունն առաջարկում է ստեղծել նախնական և միջին մասնագիտական կրթությանը տեխնիկական աջակցություն տրամադրող կազմակերպություն: Այն պետք է ներգրավվի ՄԿՈՒ վարչական և դասախոսական անձնակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի մեջ: Առաջարկվում է ստեղծել «ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն», սահմանել այդ կենտրոնի գործառնությունները, կազմակերպել այդ կենտրոնի անձնակազմի ուսուցում ՄԿՈՒ տեխնիկական աջակցության և որակի երաշխավորման տեխնիկայի ու մեթոդաբանության թեմաներով, ապահովել այդ կենտրոնի աշխատանքների արդյունավետությունը:

ՄԿՈՒ մյուս գերակայությունը ծախսերի արդյունավետության և կրթական արդյունքների (ելքերի) բարելավումն է:

Փորձագետների կարծիքով, Հայաստանի ՄԿՈՒ ներկայիս համակարգը արդյունավետ չէ: Այն պատշաճ կերպով չի բավարարում իր հաճախորդների ու սպառողների կարիքներն ու պահանջները: Այսինքն՝ այն պատրաստում է ոչ բավարար մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետներ: Պատճառն այն է, որ ուսուցումն իրականացվում է՝ առանց հաշվի առնելու ներկայիս աշխատաշուկայի պահանջները և առաջնորդվում է հին մեթոդներով: Կարծում ենք, վաղուց արդեն ժամանակն է մոռանալ հին մեթոդները և մշակել կրթական նոր, ավելի ժամանակակից մեթոդներ:

Հաստատության կողմից արդյունքների բարձր որակ ապահովելու

համար անհրաժեշտ է կատարել շուկայի ուսումնասիրություն՝ հաճախորդի կարիքները և ցանկությունները պարզելու նպատակով, դրանց համապատասխան կազմակերպել նոր դասընթացներ, հետևել այդ դասընթացների ընթացքին՝ համոզվելու համար, որ հաճախորդի կարիքներն ու ցանկությունները լիարժեք բավարարվում են, ինչպես նաև բացահայտել աշխատողների և գործատուների հմտությունների, աշխատանք գտնելու հանգամանքները:

Մասնագիտական կրթության որակի բարելավման նպատակով անհրաժեշտ է լիարժեք օգտագործել բոլոր դասասենյակները և արհեստանոցները, կրճատել դասախոսական ժամերը՝ դրանք օգտագործելով դասազրույցների, դասավանդման նյութերի և ուսանողների պրակտիկ աշխատանքին անհրաժեշտ նյութերի կատարելագործման համար: Այսինքն՝ ուսանողներին տալ ինքնուրույն սովորելու հնարավորություն: Այս առաջարկի դրական կողմն այն է, որ ուսանողները դառնում են առավել ինքնուրույն: Սակայն դրա համար անհրաժեշտ են միջոցներ՝ գրականության, տեղեկատվական նյութերի և համակարգիչների մատչելիությունն ապահովելու համար: Բացասական կողմը դասավանդողների՝ ըստ ժամաքանակի վարձատրման եղանակն է, ինչը պետք է փոխարինել մեկ այլ եղանակով: Անհրաժեշտ է նաև ՄԿՈՒ տնօրեններին ուսուցանել կառավարման համապատասխան մեթոդներ և տեխնիկա, կիրառել դասավանդողների վճարման նոր նորմեր ու կանոնակարգեր, ստեղծել բազմապրոֆիլ նոր քոլեջներ, արդիականացնել ուսումնական հաստատությունների աշխատանքի մոնիտորինգի և վերահսկման մեխանիզմները:

ՄԿՈՒ հաջորդ գերակայությունը ՄԿՈՒ ֆինանսավորման օպտիմալացումն է:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՄԿՈՒ համակարգի ֆինանսավորման մեջ պետությունը կարող է կատարել հովանավորի (ծախսեր հոգացողի), գնորդի (ծառայությունը գնողի) և ներդնողի (կոնկրետ սոցիալ-տնտեսական արդյունքներ ստանալու համար միջոցներ ներդնողի) դեր: Հայաստանում պետությունը կատարում է միայն հովանավորի դեր: Այնինչ, ավելի արդյունավետ կլիներ, եթե պետությունը կատարեր գնորդի դեր, այսինքն՝ համապատասխան միջոցներ տրամադրեր որակյալ և իրեն անհրաժեշտ մասնագետներ ստանալու համար, իսկ հետագայում օգտվեր այդ մասնագետների ծառայություններից: Սա շահավետ կլիներ ոչ միայն պետության, այլև ՄԿՈՒ շրջանավարտի համար, քանի որ վերջինս հետագայում աշխատանք ունենալու առավել մեծ հնարավորություններ կունենար: Կարծում ենք, որ այս գործառույթը կարող է իրականացնել նաև առանձին գործատուն: Պետությունը կարող է իրականացնել այս գործառույթը «պետական պատվերի» փոխակերպման միջոցով: Ամեն տարի կրթական ծառայության հաստատությունները ներկայացնում են «բիզնես պլան»՝ որպես «պետական պատվերի» մախազիծ: Բիզնես պլանի մեջ մտնում են առաջարկվող ուսուցման

ծրագրերը և ուսանողների թիվը: Այս ցուցանիշները համաձայնեցվում են հնարավոր գործատուների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Պետության իրավունքն է որոշել՝ հատկացնել, թե՞ չհատկացնել բյուջետային միջոցներ «բիզնես պլանով» առաջարկված կրթական ծառայությունների դիմաց:

ՄԿՈւ բյուջետային ֆինանսավորումն արդիականացնելու համար Հայաստանի իշխանությունները կարող են տրամադրել նաև կրթական վարկեր և փոխառություններ, կրթական վճարատոմսեր, ֆինանսական ուղղակի հատկացումներ ուսանողներին և ծնողներին: ՄԿՈւ հաստատությունների նոր ինքնավար կարգավիճակը նրանց հնարավորություն է տալիս օգտվել նաև մասնավոր ֆինանսական միջոցներից՝ հովանավորներ, ուսանողներ և նրանց ծնողների անձնական միջոցներ, մեծահասակ անհատ քաղաքացիների, ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների միջոցներ, վարկատուներ: Սակայն ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանց կողմից օգտագործվում է այս միջոցներից միայն մեկը՝ ուսանողների և նրանց ծնողների անձնական միջոցները: Հետևաբար, Հայաստանում ՄԿՈւ հաստատություններն ունեն դեռևս չօգտագործված եկամուտի այլ միջոցներ:

ՄԿՈւ վերջին գերակայությունը ՄԿՈւ արդիականացման ու մոնիտորինգի ազգային հնարավորությունների ստեղծումն է:

Վերջինիս իրականացումը կապահանջի ՀՀ կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի կարողությունների հզորացում: Անհրաժեշտ է վերապատրաստել հայ մասնագետների խումբ՝ գործատուների շրջանում ուսումնասիրություն անցկացնելու և մասնագիտական չափորոշիչների, ուսումնական պլանների և դասավանդման նյութերի մշակման համար: Անհրաժեշտ է նաև ՄԿՈւ տնօրենների համար մշակել կառավարման թեմայով վերապատրաստման ծրագիր, մշակել կարողությունների վրա հիմնված նոր ուսումնական պլաններ, ստեղծել ՄԿՈւ ազգային տեղեկատվական կենտրոն:

Վերոգրյալ գերակայությունների իրականացումը կնպաստի ՄԿՈւ համակարգի բարելավմանը, նրա նշանակության և որակի բարձրացմանը, ինչպես նաև կզարգանա գիտելիքների վրա հիմնված տնտեսությունը: ՄԿՈւ ուսանողները կունենան սովորելու և հետազայում աշխատանք գտնելու ավելի լայն հնարավորություններ: Կրթություն ստանալու համար աջակցություն կստանան սոցիալապես անապահով խմբերը: Այս ծրագրի իրականացումը կխթանի նաև գործազրկության նվազեցմանը:

**Կրթական բարեփոխումներ,
մասնագիտական կրթություն-աշխատաշուկա**

Հայաստանի կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը սերտորեն կապված է միջազգային կրթական հանրության զարգացման միտումների հետ, որն իր հերթին պայմանավորված է զարգացող համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող անշրջելի վերափոխումներով:

XXI դարի սկզբին համաշխարհային տնտեսության, գիտության զարգացման տեմպերը շատ ավելի բարձր են, քան երբևէ: Տնտեսության, արդյունաբերության, գիտության և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում բարձր տեխնոլոգիաների ինտենսիվ ներդրումը և օգտագործումը հանգեցնում են ոչ միայն ազգային տնտեսությունների, այլև աշխատանքի համաշխարհային շուկայի կառուցվածքային փոփոխությունների: Աշխատուժի նկատմամբ ձևավորվում են նոր պահանջներ, նվազում է ցածր որակավորում ունեցող մասնագետների պահանջարկը, փոխարենն ավելանում է որակավորված մասնագետներինը, տեղի է ունենում մասնագետների ինտենսիվ տեղաշարժ:

XX դարի արդյունաբերական տնտեսությունը XXI դարի սկզբին վերափոխվում է «գիտելիքների տնտեսության», հասարակությունը՝ տեղեկատվական հասարակության կամ «գիտելիքների հասարակության»: «Մարդկային ներուժ» ավանդական արտահայտությունը վերափոխվում է «մտավոր ներուժի»: Մտավոր աշխատանքը դադարում է լինել միայն հասարակության փոքր խմբերի մենաշնորհ: Հասարակության ավելի ու ավելի շատ անդամներ են ընդգրկվում ստեղծագործական աշխատանքի մեջ:

Հասարակության զարգացման տեմպերի արագացմանը զուգընթաց առաջ են գալիս նաև համամարդկային հիմնախնդիրներ (բնապահպանական, սոցիալական, էթնիկական և այլն), որոնք կարող են լուծվել միայն միջազգային հանրության համախմբման և միասնական գործողությունների արդյունքում:

Այս պայմաններում կրթության գլխավոր նպատակը սովորողներին ոչ միայն կայուն, հիմնարար գիտելիքների հաղորդումն ու ուսուցումն է, այլև որոշումներ ընդունելու, ակտիվ հաղորդակցվելու ունակ քաղաքացու ձևավորումը: Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է մեր երկրի կրթական համակարգում իրականացնել ոչ միայն կառավարման ու ֆինանսավորման, այլև բովանդակային բարեփոխումներ. վերանայել

պետական չափորոշիչներն ու ուսումնական ծրագրերը, ներդնել տեղեկատվական տեխնոլոգիաներ, պայմաններ ստեղծել մանկավարժական կադրերի մասնագիտական կատարելագործման համար, հարստացնել ուսումնական հաստատությունների (ՈւՀ) նյութատեխնիկական բազան և այլն:

Մասնագիտական կրթության համակարգի արդյունավետ գործառնությունն առանցքային նշանակություն ունի տնտեսության աճող պահանջարկի բավարարման, տնտեսական համակարգի զարգացման, բնակչության կրթամակարդակի բարձրացման, աշխատանքային զբաղվածության ծավալների ավելացման, գործազրկության կրճատման, աղքատության հաղթահարման և այլ հասարակական խնդիրների լուծման տեսանկյունից:

Ներկա ժամանակներում տնտեսվարող կազմակերպությունների գոյատևումը մեծապես կախված է նրանց արտադրողականության և մրցունակության անընդհատ աճից, որի առաջնային և ամենակարևոր գործոնը բարձր որակավորում ունեցող աշխատուժի առկայությունն է: Նույնիսկ նորագույն տեխնոլոգիաներով զինված ձեռնարկությունները չեն կարող երկար ժամանակ արդյունավետ գործել, եթե չունեն որակյալ աշխատուժ: Կազմակերպությունների շարունակական զարգացման համար անհրաժեշտ են երիտասարդ որակյալ կադրեր, ովքեր ի վիճակի կլինեն արագ արձագանքել արտաքին փոփոխություններին և ապահովել կազմակերպության կայունությունը՝ անկախ արտաքին գործոնների ազդեցությունից: Իսկ անընդհատ երիտասարդ կադրեր ունենալու համար հարկավոր է ունենալ ճկուն կրթական համակարգ, որը կարող է կրթել որակյալ մասնագետներ՝ տնտեսության զարգացող և փոփոխվող պահանջներին համապատասխան:

Նախկին պլանային կրթական համակարգում ամեն ինչ հիմնավորված էր ու խարսխված տրամաբանական փաստարկների վրա, գոյություն ունեին ֆինանսավորման սահմանված սկզբունքներ և մեխանիզմներ: Համակարգը ոչ միայն պլանավորում էր անհրաժեշտ մասնագետների քանակը, որոշում մասնագետների որակական հատկանիշները, այլև բոլոր մասնագետներին անխտիր ապահովում էր աշխատանքով: Ֆինանսական բոլոր ծախսերը կատարվում էին բացառապես պետական բյուջեից, կրթությունն ընդհանուր էր և բոլորի համար անվճար: Նախկինում ուսումնական հաստատությունները սերտորեն աշխատում էին հիմնարկ ձեռնարկությունների հետ, որոնք ուսումնական հաստատությունների համար բազա էին հանդիսանում ուսանողների ուսումնական գործնական պարապմունքները անցկացնելու և տեսական գիտելիքները գործնական աշխատանքով ամրապնդելու համար:

1991 թվականից հետո, ինչպես տնտեսության բոլոր ճյուղերը, այնպես էլ կրթության ոլորտը ենթարկվում է արմատական փոփոխությունների: 90-ականների սկզբին Հայաստանի կրթական համակարգի զարգացումն ընթանում էր առանց պետական ծրագրավորված քաղաքականության: Մի

կողմից համակարգը պետք է դիմակայեր անցման շրջանի աննախադեպ դժվարություններին, հատկապես տնտեսական ճգնաժամի հետևանքով պետական ֆինանսավորման կրճատմանը, ազգաբնակչության աղքատացմանը և շերտավորմանը, աշխատանքի շուկայում պահանջարկի կտրուկ անկմանը, մյուս կողմից՝ շատ կարճ ժամանակահատվածում այն պիտի բավարարեր նոր սոցիալական և տնտեսական համակարգի պահանջներին, ինչը, վերը նշած գործոնների առկայության պատճառով, գրեթե անհնար է դառնում:

1990-ականների սկզբներից սկսած՝ անցումային շրջանը, արտադրական ձեռնարկությունների համատարած անգործությունը, նոր հարաբերությունների և աշխատաշուկայի (ԱՇ) բացակայությունը շուրջ 10 տարի կաթվածահար արեցին նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության համակարգը: Եթե 1990 թվականին Հայաստանում գործում էր 91 հաստատություն շուրջ 47000 սովորողներով, ապա 2006 թվականին նախնական մասնագիտական կրթություն իրականացվում էր 44 հաստատությունում (28 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն (ՆՄՈՒՀ), 16 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (ՄՄՈՒՀ), ընդամենը 6500 սովորողով: Աճը նկատվում է 2004 թվականից, սակայն ոչ թե ԱՇ-ի ուսումնասիրության կամ սոցիալական գործընկերների շահագրգռվածության, այլ պետական շահագրգռվածության հետևանքով՝ պայմանավորված պետության կրթական համակարգն ամբողջացնելու և քաղաքացու սահմանադրական իրավունքն ապահովելու պարտավորությամբ:

Տնտեսության զարգացմանը զուգահեռ զգացվում է արհեստավորի (նախնական մասնագիտական կրթություն՝ ՆՄԿ) և մասնագետի (միջին մասնագիտական կրթություն՝ ՄՄԿ) աշխատուժի կարիք: ԱՇ և տնտեսության մասնագիտական կարիքների տեսական հաշվառմամբ՝ ՀՀ կառավարությունը հաստատել է 102 մասնագիտություն (393 որակավորում) պարունակող նախնական մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը:

Սիաժամանակ, միջին մասնագիտական 83 պետական և 28 ոչ պետական ուսումնական հաստատություններում պատրաստվում են մասնագետներ շուրջ 100 մասնագիտությունների գծով՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկի 315 մասնագիտություններից:

Այսուհանդերձ, այս հաստատություններում ուսուցումն իրականացվում է անցյալի իներցիայով, և տեսանելի է 2 խոշոր բացթողում: Նախ՝ բավարար չափով հաշվի չեն առնվում կամ գրեթե անտեսվում են ԱՇ-ի պահանջները, և երկրորդ՝ անբավարար է գործատուների, սոցիալական գործընկերների ներկայությունը ուսումնական հաստատությունների աշխատանքների կազմակերպման և կառավարման գործընթացում:

Ուսումնական հաստատություն «ԱՇ» սոցիալական գործընկերներ հարաբերություններին հատկանշական են՝

ա. դասավանդողների մասնագիտական որակների անհամապատաս-

խանությունը ներկա արտադրական պահանջներին,

բ. ուսուցման և գործնականի թույլ կապը, իսկ գործնականի կազմակերպման պարագայում՝ գործատուների շահագրգռվածության պակասը,

գ. գործազուրկների վերապատրաստման, արտադրական ծրագրերի իրականացման, ուսուցման և վերամասնագիտացման ծրագրերի անբավարարությունը,

դ. կարիերայի զարգացման համակարգի անկատարությունը:

Ընդհանուր առմամբ, մասնագիտական կրթություն - ԱՇ կապը բավական թույլ է, իսկ սոցիալական գործընկերների և շահառուների մասնակցությունը մասնագիտական կրթության զարգացման գործին առաջիմ աննշան է:

Անբավարար է հաստատությունների մեծ մասի ապահովվածությունը ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցներով, ուսումնական սարքավորումներով, տեղեկատվական, համակարգչային տեխնիկայով, կապի միջոցներով: Բոլոր ուսումնական հաստատությունների ուսումնականության բազան արդիականացման և վերազինման կարիք ունի: Շատ կրթօջախներում բացակայում են անհրաժեշտ կաբինետ-լաբորատորիաները, արհեստանոցները, իսկ առկա սարքավորումները ծայրահեղ հնացած են և, մասնակիորեն անգամ, հնարավորություն չեն ընձեռնում բավարար մակարդակով իրականացնել գործնական և լաբորատոր պարապմունքներ:

Հաստատությունների գրադարանային ֆոնդերը հնացած են և չեն համապատասխանում ժամանակակից գրադարաններին ներկայացվող պահանջներին՝ տարածքի, կահավորման և տեխնիկական սպասարկման առումով (էլեկտրոնային գրադարաններ):

Ուսումնական հաստատություններում կենտրոնացված շուրջ 1,5 միլիոն գրքային ֆոնդի գերակշիռ մասը բարոյապես և ֆիզիկապես մաշված է և չի օգտագործվում: Վերջին տարիների ընթացքում նոր մասնագիտական գրականություն շատ քիչ է հրատարակվել, արտասահմանյան գրականության ձեռքբերումը հնարավոր չէ ֆինանսական միջոցների սղության և լեզուների (բացի ռուսերենից) անբավարար իմացության պատճառով:

ՄԿՈՒ ոլորտում առկա են մի շարք կադրային հիմնախնդիրներ բազմաթիվ դրսևորումներով. անկատար է դասավանդողների պատրաստման համակարգը, նկատելի է կադրերի որակի անկում, համակազմի ծերացման կայուն միտում, սեռային անհամամասնություն, որակյալ կադրերի արտահոսք և այլն:

Մտահոգիչ է դասատուների տարիքային կազմը: Միջին տարիքը կազմում է 55 տարեկան, յուրաքանչյուր 6 աշխատողից մեկը կենսաթոշակառու է:

Հիմնվելով մի շարք հետազոտությունների, թրեյնինգների և քննարկումների վրա՝ կարող ենք նշել, որ ներկայիս կրթական համակարգը չի նպաստում մրցունակ կադրերի պատրաստմանը: Ավելին՝ շատ գործատուներ

համոզված են, որ ներկայիս կրթական համակարգը «պատրաստում է պոտենցիալ գործազուրկներ»:

Նման համակարգի շրջանավարտներին գործատուները ոչ միշտ են համարում մրցունակ և բարձր որակավորում ունեցող մասնագետներ: Ուստի, հետագայում աշխատանքի ընդունվելիս և աշխատաշուկային ինտեգրվելիս, նրանք հաճախ լուրջ խնդիրների առաջ են հայտնվում, քանզի չունեն աշխատանքային փորձ, համապատասխան հմտություններ և գիտելիքներ: Ներկայումս գործատուները գերադասում են աշխատանքի ընդունել այնպիսի մասնագետների, ովքեր կարող են անմիջապես անցնել աշխատանքային պարտականությունների կատարմանը: Գործատուները չեն ցանկանում ֆինանսական և մարդկային ռեսուրսներ ներդնել երիտասարդ շրջանավարտների մասնագիտական հմտությունների զարգացման համար:

Ցանկացած տնտեսություն՝ զարգացած կամ նոր զարգացող, մշտապես կարիք ունի լավ կրթված, զարգացած և խելացի երիտասարդ մարդկանց, ովքեր կկարողանան ապագայում արձագանքել միջավայրի փոփոխությանը՝ ապահովելով տնտեսության կայունությունը: Ներկայիս շուկայական տնտեսության մեջ շատ ձեռնարկությունների արձանագրած հաջողությունները հիմնականում պայմանավորված են այդ ձեռնարկություններում առկա որակյալ աշխատուժով: Միայն բարձր որակավորում ունեցող և անընդհատ կատարելագործվող մասնագետները կարող են ապահովել ձեռնարկությունների բարձր մրցակցությունը և արտադրողականությունը: Հաշվի առնելով որակյալ մարդկային ռեսուրսի հույժ կարևորությունը ձեռնարկության հետագա զարգացման գործընթացում՝ եվրոպական շատ երկրներում, Միացյալ Նահանգներում և այլուր մշակվել են ուսումնական հաստատություն-ձեռնարկություն համագործակցության ծրագրեր:

Ուսումնական հաստատություն-ձեռնարկություն համագործակցության միջազգայնորեն ընդունված ամենահայտնի տեսակները հետևյալ են՝

- խորհրդատվություն (ինչպես ֆորմալ, այնպես էլ՝ ոչ ֆորմալ բնույթի),
- ուսուցում և ուսումնական ծրագրերի կատարելագործում (համատեղ կազմված ծրագրեր, շարունակական կրթության կարճաժամկետ, միջին և երկարաժամկետ դասընթացներ, ամձնակազմի փոխանակում և այլն),
- գիտահետազոտական աշխատանքներ,
- մասնագետների ներգրավում դասախոսական աշխատանքներում,
- ուսումնական պրակտիկայի համատեղ կազմակերպում,
- այլ (կանոնավոր այցեր, համատեղ կազմակերպված հանդիպումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, համատեղ հրատարակություններ, համատեղ մասնակցություն ցուցահանդեսներին, տոնավաճառներին, ձեռնարկությունների կողմից աջակցություն առանձին ուսանողների և այլն):

ՈւՀ-ների և ձեռնարկությունների համագործակցության արդյունքում կարող են ստեղծվել մոդուլային ուսուցման նոր ծրագրեր կամ այնպիսի ծրագրեր, որոնք առավելաբար ուղղված կլինեն տնտեսության կոնկրետ ճյուղի առանձնահատուկ խնդիրների լուծմանը: ՈւՀ-ների և ձեռնարկությունների համագործակցության մյուս կարևորությունն այն է, որ ուսումնական հաստատության ուսանողները հնարավորություն կունենան ուսումնական պրակտիկան անցկացնել ուսումնական հաստատությանը գործընկեր ձեռնարկություններում և ձեռք բերել համապատասխան աշխատանքային փորձ:

Տարբեր ձեռնարկություններում ուսանողների աշխատանքն առաջին հերթին կազմակերպվում է ուսանողի շահերից ելնելով: Սակայն լավ կազմակերպված ծրագրից կարող են շահել համագործակցող բոլոր կողմերը՝ ինչպես ուսանողները, այնպես էլ՝ ձեռնարկությունը և ուսումնական հաստատությունը:

Այսօր Հայաստանի ՈւՀ-ների և գործատուների պահանջների միջև առկա է լուրջ խզում, որի հետևանքով Հայաստանում նկատվում է մի կողմից՝ բարձրագույն և մասնագիտական կրթություն ունեցողների գործազրկության բարձր մակարդակ (բարձրագույն կրթություն ունեցողների 18,1%-ը և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների 28,3%-ը գործազուրկ են), մյուս կողմից էլ շատ գործատուներ պնդում են, թե չեն կարողանում գտնել անհրաժեշտ որակավորում ունեցող մրցունակ մասնագետներ և որակյալ բանվորներ:

Մասնագիտությունների և պահանջարկի խզման առաջնային պատճառներից մեկն այն է, որ ներկայիս ուսումնական հաստատություններից շատ շատերում չեն գործում «կարիերայի կենտրոններ» կամ աշխատաշուկայի փոփոխությունները հետազոտող այլ մարմիններ: Ուստի, առանց աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխություններին և հնարավոր միտումներին տեղյակ լինելու, բնական է, որ ուսումնական հաստատությունները չեն կարողանա կազմել ուսումնական այնպիսի ծրագրեր, որոնք հնարավորություն կտան կրթել այսօրվա գործատուի պահանջներին համապատասխան կադրեր:

Աշխատանքի տեղավորման գործակալությունների (ԱՏԳ) շրջանում անցկացված փոքրիկ հարցման արդյունքում պարզվել է, որ ԱՏԳ-ներից և ոչ մեկը չի համագործակցում ուսումնական հաստատությունների հետ և տեղյակ չի պահում աշխատաշուկայում տեղի ունեցող փոփոխությունների և գործատուների պահանջների մասին:

Ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացման վրա բացասաբար է ազդում նաև դասախոսների ցածր մակարդակը: Ներկայումս շատ ուսումնական հաստատություններում աշխատում են Խորհրդային Միության տարիներին ուսում առած և վերապատրաստված դասախոսներ, ովքեր այլևս չեն վերապատրաստվել (տարբեր պատճառներով, հիմնականում՝ ֆինանսական) և տեղյակ չեն կամ չեն տիրապետում դասավանդման

արդիական մեթոդներին: Մյուս կողմից, այսօր մեր հանրապետությունում կան բազմաթիվ որակյալ մասնագետներ, ովքեր կրթություն են ստացել նաև արտասահմանում, բայց ուսումնական հաստատություններում բավական ցածր վարձատրության պատճառով գերադասում են աշխատել այլ ոլորտներում և չեն փոխանցում իրենց գիտելիքներն ու փորձը երիտասարդ մասնագետներին:

Հայաստանի կրթության ոլորտում հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել մարդկային գործոնին, քանի որ մեր երկիրն ունի բնական սահմանափակ ռեսուրսներ: 2004 թվականին ՀՀ բնակչության թվաքանակը եղել է 3210 հազար մարդ, որի 26%-ը՝ շուրջ 840 հազարը, երիտասարդությունն է (18-30 տարեկան): Ուստի, երիտասարդությունը համարվում է երկրի կարևորագույն պոտենցիալը:

Տնտեսական ճգնաժամի, սոցիալական անհավասարությունների խորացման, ավանդական արժեքների քայքայման և գործազրկության բարձր մակարդակի պատճառով վատթարացան սոցիալական գրեթե բոլոր շերտերի, այդ թվում նաև երիտասարդների կենսապայմանները: Ներկայումս, ըստ պաշտոնական տվյալների, ՀՀ-ում գործազրկության մակարդակը մոտ 8% է: Ոչ պաշտոնական տվյալներով՝ այն հասնում է շուրջ 30%-ի: Մեր երկրում երիտասարդների շուրջ 22%-ը չունի աշխատանք: Հետաքրքրական է նաև այն, որ երիտասարդների 56%-ը չի աշխատում իր մասնագիտությամբ:

Մյուս կողմից գործատուներն այսօր հակված են աշխատանքի ընդունել ավելի հասուն տարիքի փորձված մասնագետների, քան երիտասարդների, ովքեր պակաս մրցունակ են՝ համապատասխան աշխատանքային փորձ չունենալու պատճառով:

Մեր օրերում աշխատաշուկայի պահանջներն այլևս կայուն և կանխատեսելի չեն: Այն, ինչպես անցյալում, այլևս չի առաջարկում ցմահ երաշխավորված և բնույթով անփոփոխ աշխատանքներ: Այդ իսկ պատճառով ներկայիս գործատուները գերադասում են ունենալ ճկուն աշխատուժ, որը պատրաստ է անընդհատ կատարելագործել գիտելիքներն ու հմտությունները՝ փոփոխվող տնտեսական միջավայրին համապատասխան:

Աշխատուժին ներկայացվող գործարարների պահանջները բաժանվում են երեք հիմնական խմբերի՝

1. անձնային որակական հատկանիշներ,
2. ընդհանուր գիտելիքներ և հմտություններ,
3. զուտ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ:

Առաջին հերթին, բոլոր գործատուներն անխտիր կարևորում են աշխատուժի **անձնային որակական հատկանիշները**՝ հատկապես առանձնացնելով հետևյալները՝

1. կարգապահություն,
2. ճշտապահություն,

3. ազնվություն,
4. հարգալից վերաբերմունք ինչպես գործատուի, այնպես էլ մյուս աշխատակիցների և հաճախորդների հանդեպ,
5. գաղտնապահություն,
6. անձնական հիգիենայի պահպանում:

Այնուհետև, գործատուները գրեթե **ցանկացած մասնագետից պարտադիր պահանջում են հետևյալ հիմնական գիտելիքներն ու հմտությունները՝**

1. օտար լեզվի իմացություն (անգլերենի իմացությունը պարտադիր է),
2. համակարգչային հմտություններ,
3. հաղորդակցման հմտություններ,
4. խմբում աշխատելու կարողություն,
5. էթիկայի տարրական կանոնների տիրապետում,
6. ինքնակրթությամբ զբաղվելու և անընդհատ կատարելագործվելու ցանկություն և կարողություն:

Այս ամենից հետո միայն գործատուները նշում են **գուտ մասնագիտական գիտելիքների** կարևորությունը, ինչն արդեն, կախված մասնագիտությունից, շատ տարբեր կարող է լինել:

Հատկանշական է այն պարագան, որ գործատուներն իրենց ելույթներում հաճախ նշում են, թե գերադասում են աշխատանքի ընդունել անձնային վերոնշյալ որակներով և հիմնական գիտելիքներին ու հմտություններին տիրապետող մասնագետների, թեկուզև պակաս աշխատանքային փորձով, քան՝ հարուստ աշխատանքային փորձ և գիտելիքներ ունեցող մասնագետների, որոնց մոտ բացակայում են գործատուների կողմից առանձնացված անձնային որակական հատկանիշները:

Մասնագիտական կողմնորոշման խնդիրները հանրակրթական դպրոցում

Քաղաքական և տնտեսական ազատ շուկայական համակարգում աշակերտների մասնագիտական կողմնորոշումը դառնում է միջնակարգ կրթության կարևորագույն խնդիրներից մեկը:

Կառավարման ամբողջատիրական համակարգում աշխատուժի առաջարկն ու պահանջարկը (շուկան) կարգավորվում էր ոչ թե ազատ շուկայական հարաբերությունների օրենքներով, այլ՝ կառավարման կանոններով: Քաղաքացին ապահովագրված էր բացահայտ գործազրկությունից, և դպրոցն աշխատուժի շուկայում կողմնորոշվելու հմտություններ ձևավորելու նպատակ չէր հետապնդում: Այն հիմնականում տալիս էր հիմնարար, տեսական (աշակերտի համար վիրտուալ) գիտելիքներ: Պրակտիկ գործունեությունը հասցված էր նվազագույնի, և շրջանավարտն անձանոթ էր մնում մեծահասակների աշխատանքային գործունեության առանձնահատկություններին:

Աշակերտների մասնագիտական կողմնորոշումը հիմնականում իրականացվում էր «Աշխատանքի ուսուցում» առարկայի շրջանակներում: Իրականում այն զարգացնում էր կենցաղում կիրառելի և տարբեր մասնագիտությունների հետ առնչվող գործնական որոշ հմտություններ: Ընդհանուր առմամբ նմանօրինակ ուսուցումը բացահայտում է սովորողների որոշ նախասիրություններ, սակայն այդ ուսուցումը միայն վերապահումներով կարելի է կոչել մասնագիտական կողմնորոշում:

Միաժամանակ հարկ է նշել, որ անհրաժեշտ փոփոխությունների դեպքում «Աշխատանքի ուսուցում» առարկան կարող է աշակերտի մասնագիտական կողմնորոշման համար լավ ուղեցույց դառնալ:

Նախկինում գոյություն ունեին մասնագիտական կողմնորոշման «ուսումնական կոմբինատներ», որտեղ միջնակարգ կրթությանը զուգահեռ աշակերտները սովորում էին որոշ մասնագիտություններ (վարորդի, հյուսնի, փականագործի, ավտոմեխանիկի և այլն)՝ ստանալով համապատասխան որակավորում: Սակայն սա նույնպես լուրջ վերապահումներով կարելի է համարել մասնագիտական կողմնորոշում, քանի որ խիստ սահմանափակ էր և՛ նմանատիպ դպրոցների թիվը, և՛ ուսուցանվող մասնագիտությունների շրջանակը:

Կարծում ենք՝ զարգացնելով «ուսումնական կոմբինատների» փորձը, այն կարելի է լավագույնս կիրառել մասնագիտական ուսուցման և կողմնորոշման համար, հատկապես տեղական տարբեր տնտեսվարող հաստատությունների հետ համատեղ կրթական համալիրներ ձևավորելու

պարագայում: Նման հաստատությունների դերում կարող են հանդես գալ և՛ հզոր ձեռնարկություններ, և՛ փոքր ու միջին տնտեսվարողներ, օրինակ՝ Կապանի լեռնամետալուրգիական կոմբինատը, «Արզնի» գյուղատնտեսական համալիրը, կաթնամթերքի որևէ ձեռնարկություն և այլն: Այս մոտեցումն օգտակար կարող է լինել ինչպես միջնակարգ հանրակրթական, այնպես էլ միջնակարգ մասնագիտական դպրոցների համար:

Ազատ շուկայական տնտեսական հարաբերություններին անցումը քաղաքացիներից ջանքեր ու գիտելիքներ է պահանջում աշխատուժի շուկայում կողմնորոշվելու համար: Ազատական տնտեսությունը թելադրում է նոր մոտեցումներ մասնագիտական կողմնորոշումը կազմակերպելու գործում և առավել խստապահանջ է սովորողների անհատական ունակությունների, հակումների, իրական գիտելիքների, կարողությունների ձևավորման հարցում:

Կարևոր խնդիր է դառնում աշակերտի՝ սեփական **հավակնությունները** ձևակերպելու և **կարիերան** պլանավորելու կարողության զարգացման հարցը: Սեզանում, մինչև վերջերս, այս հասկացություններն օգտագործվել են բացառապես բացասական իմաստով: Մինչդեռ այսօր շատ կարևոր է աշակերտի մեջ զարգացնել սեփական ունակությունները, կարողությունները, տաղանդը տեսնելու, իրատեսական ինքնագնահատման հմտությունները, որոնք հետագայում կօգնեն նրան հետդպրոցական կրթության հարցում ճիշտ ընտրություն կատարել և որպես մասնագետ հասարակության մեջ սեփական տեղը գտնել:

Կարծում ենք՝ 12-ամյա միջնակարգ կրթությունն առավել մեծ հնարավորություն է ընձեռում իրականացնելու վերոհիշյալ խնդիրները. նախ՝ դրա համար անհրաժեշտ բավարար ժամանակի առումով, երկրորդ՝ համեմատաբար մեծ տարիքում աշակերտն ավելի պատրաստված է ընկալելու մասնագիտական կողմնորոշման անհրաժեշտությունը:

Չնայած հանրակրթական դպրոցում սովորողների մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ մոտեցումները փոխելու անհրաժեշտության գիտակցությանը, իրավիճակն այսօր էլ առանձնապես չի փոխվել: Բացակայում է միջնակարգ դպրոցի աշակերտի մասնագիտական կողմնորոշմանն ուղղված պետական քաղաքականությունը: Ցավոք, դրա անհրաժեշտությունը գրեթե չի հիշատակվում հանրակրթության մասին պետական կրթական քաղաքականության փաստաթղթերում, այդ թվում՝ հանրակրթության պետական կրթակարգում, միջնակարգ կրթության պետական առարկայական չափորոշիչներում և ծրագրերում:

Այսօր միայն մի քանի հաստատություններ սեփական նախաձեռնությամբ իրականացնում են մասնագիտական կողմնորոշման ծրագրեր: Նմանօրինակ աշխատանքի երկարամյա փորձ ունի «Մխիթար Մեբաստացի» կրթահամալիրը: Այս ուղղությամբ վերջին երկու տարիներին որոշ փորձեր են կատարվում նաև Երևանի թիվ 177 դպրոցում: Խոսքը վերաբերում է վաղ տարիքից (միջին դպրոց) սովորողների մասնագիտական կողմնորոշմանը:

Սակայն մասնավոր փորձերը բավարար չեն խնդրի լուծման համար:

Մասնագիտական կողմնորոշման համակարգի հստակ ձևավորված քաղաքականության և ծրագրերի բացակայությունն իրենց դրոշմն են թողնում միջնակարգ դպրոցի շրջանավարտի անձնային որակների վրա: Շատ հաճախ **աշակերտը** չի պատկերացնում, թե ինչպիսի անձնային որակներ և ունակություններ են անհրաժեշտ այս կամ այն մասնագիտության համար և ընտրում է մասնագիտություն՝ լավ չպատկերացնելով անգամ այդ մասնագիտության գործառույթները, առանձնահատկությունները: Այս ամենին հետևում է հիասթափությունը, ծանր, հոգեմաշ աշխատանքը և ձախողումը:

Ուսուցիչներից շատերը պարզունակ պատկերացում ունեն մասնագիտական կողմնորոշման խնդիրների վերաբերյալ: Հստակ չեն պատկերացնում իրենց դերը խնդրի իրականացման գործում: Ուսուցիչներից և կրթական համակարգի պաշտոնյաներից շատերը հայտարարում են, թե «ցանկացած առարկայի չափորոշիչներում, ծրագրերում, ինչպես նաև դասագրքերում ընդգրկված բոլոր պահանջները, թեմաներն ու նյութերը նվիրված են մասնագիտական կողմնորոշմանը»: Այսպես՝ ֆիզիկոսի մասնագիտությունն ընտրելիս աշակերտին կողմնորոշվելու հնարավորություն է ընձեռում ֆիզիկայի ուսուցումը:

Այն, որ հանրակրթական դպրոցում ուսուցանվող ամեն առարկա ուղղված է ապագա մասնագետի կրթությանը, կասկած չի հարուցում, բայց դա չի կարելի շփոթել համակարգված, պլանավորված, չափորոշված մասնագիտական կողմնորոշման հետ:

Բնականաբար շատ կարևոր է նաև **ծնողների**՝ որպես առաջին և հեղինակավոր խորհրդատուների դերը դպրոցականների մասնագիտական կողմնորոշման հարցում: Սակայն ժամանակակից աշխատուժի շուկայում մեծ թվով նոր մասնագիտությունների ի հայտ գալը նվազեցնում է ծնողների իրազեկությունը, բարդացնում երիտասարդներին օգնելու նրանց դերակատարությունը:

Ինչպես տեսնում ենք, «մասնագիտական կողմնորոշում» հասկացության վերաբերյալ ընկալումները մեզանում առայժմ հստակեցված չեն:

Մասնագիտական կողմնորոշում ասելով՝ մենք հասկանում ենք ստորև բերված կարողությունների և հմտությունների ամբողջությունը, որոնք անհրաժեշտ է ձևավորել աշակերտների մեջ՝

- սովորողների՝ սեփական ունակությունները, հակումները իրատեսորեն գնահատելու կարողությունների ձևավորում,
- տարբեր մասնագիտությունների (մասնագետների) գործնական և անձնային որակներին ներկայացվող ընդհանուր պահանջների իմացություն,
- դպրոցական գիտելիքների սահմաններում, մատչելի կերպով և միջոցներով առանձին մասնագիտությունների կամ աշխատանքային գործունեության բնագավառների առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների զարգացում և իրազեկության ապահովում,

- աշակերտների՝ դպրոցական որակյալ կրթության կարևորության գիտակցում՝ աշխատանքային շուկայում իրենց գործողությունների ազատությունն ու ճկունությունն ապահովելու նպատակով,
- աշխատուժի շուկայի մասին տեղեկացվածության ընդլայնում:

Աշակերտի մասնագիտական կողմնորոշման նպատակը

Միջնակարգ կրթության մասնագիտական կողմնորոշման **նպատակն** է ձևավորել այնպիսի որակներ, որոնք կօգնեն շրջանավարտին, ըստ իր ունակությունների և հասարակության ընձեռած հնարավորությունների, կողմնորոշվել մասնագիտություն ընտրելիս, ի հայտ բերել, հստակեցնել սեփական հավակնությունները, պլանավորել կարիերան:

Խնդիրները և մարտահրավերներն այսօր

- մշակել աշակերտի մասնագիտական կողմնորոշման պետական քաղաքականություն,
- մշակել աշակերտի մասնագիտական կողմնորոշման կազմակերպման սկզբունքները միջնակարգ կրթության տարբեր աստիճաններում՝ տարրական, միջին, ավագ դպրոցներում,
- ստեղծել աշակերտի մասնագիտական կողմնորոշման կազմակերպման ծրագրեր միջնակարգ կրթության տարբեր աստիճանների՝ տարրական, միջին, ավագ դպրոցների համար,
- կազմակերպել մասնագիտական կողմնորոշման խնդիրներին նվիրված վերապատրաստման դասընթացներ դասղեկների, դաստիարակների, սոցիալական մանկավարժների համար, առավել ուշադրություն դարձնել նրանց գործառնություններում այդ խնդիրների արծարծմանը,
- բարձրացնել ուսուցիչների մասնագիտական հմտությունները աշակերտի մասնագիտական կողմնորոշման խնդիրների լուծման բնագավառում,
- ընդլայնել տարբեր առարկաների չափորոշիչներ և ծրագրեր մշակող մասնագիտական խմբերի տեղեկացվածությունը մասնագիտական կողմնորոշման խնդիրների վերաբերյալ՝ չափորոշիչներում և ծրագրերում խնդրի ներառումն ապահովելու համար,
- ստեղծել մասնագիտական կողմնորոշման կրթական նախագիծ-ծրագրեր դպրոցների և գործնական աշխատանքի բազա հանդիսացող հաստատությունների համատեղ գործունեություն իրականացնելու համար,
- կազմակերպել աշակերտական տարբեր միջոցառումներ (ցուցահանդեսներ, մրցույթներ)՝ նվիրված աշակերտների մասնագիտական կողմնորոշման հաջողություններին,
- մեծացնել ծնողների տեղեկացվածությունը սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցերում:

Աշակերտների մասնագիտական կողմնորոշման որոշ դրույթներ

1. Տարրական դասարաններում երեխաներին մատչելի ձևերով տեղեկացնել տարբեր մասնագիտությունների և արհեստների, ինչպես նաև դրանց կարևորության մասին (օրինակ՝ ով ի՞նչ է ստեղծում կամ ի՞նչ կարևոր գործ է անում մարդկանց և երկրի համար):

Անկասկած, նման դասեր և նյութեր արդեն իսկ կան գործող դասագրքերում (նմանօրինակ դասերի բավական հաջող օրինակներ կան «Կյանքի հմտություններ» դասընթացում), սակայն դրանք շատ փոքրաթիվ են, ներկայացված են տարերայնորեն, մեթոդական ձեռնարկները և ուղեցույցները ուսուցիչների ուշադրությունը չեն բևեռում սովորողների մասնագիտական կողմնորոշման խնդրի վրա: Մինչդեռ խնդիրը կարոտ է հայեցակարգային մոտեցման: Վերջինս հնարավորություն կտա մշակել աշակերտների մասնագիտական կողմնորոշման արդի քաղաքականություն, հարցը դարձնել կրթակարգային խնդիր՝ ինչպես հանրակրթության պետական, այնպես էլ դպրոցական կրթակարգերի մակարդակով:

2. Միջին դասարաններում շարունակել աշակերտների մասնագիտական կողմնորոշումը՝ պարզաբանելով յուրաքանչյուր մասնագիտության համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների անհրաժեշտությունը:

Սա զգալի չափով կնպաստի աշակերտի սեփական առաջընթացը պլանավորելու հմտությունների զարգացմանը: Կարծում ենք՝ ուսուցիչների խնդիրն է աշակերտներին բացատրել այնպիսի հարցեր, ինչպես օրինակ՝ ի՞նչ կարող է տալ ֆիզիկայի, քիմիայի, լեզուների առանձին բաժինների իմացությունն ապագա մասնագետին՝ բժշկին, օդաչուին, վարսահարդարին և այլն: Չենք ընդունում մի շարք մասնագետների մտահոգությունը, թե սա կարող է հանգեցնել գռեհիկ օգտապաշտության (պրագմատիզմի)՝ դրդելով աշակերտին սովորել միայն որոշակի առարկաներ: Այստեղ խոսքը «սովորի՛ր, դա քեզ պետք է գալու» կարգախոսի մասին չէ, այլ այն մասին, որ աշակերտը հնարավորինս պետք է իմանա, թե ինչո՞վ է զբաղվում այս կամ այն մասնագետը և ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են անհրաժեշտ լավ մասնագետին:

Ներկայիս դասագրքերում ողջ սպեկտրով ներկայացված են հիմնարար գիտությունները, բայց հաճախ՝ հեռու ժամանակակից կյանքից և պրակտիկ կիրառման բնագավառներից: Աշակերտն իրավունք ունի իմանալու, թե որքանո՞վ է օրվա դասի նյութը կապված գիտության, տեխնիկայի, արտադրության ամենաժամանակակից ուղղությունների՝ բարձր տեխնոլոգիաների, հեռահաղորդակցության, կենսատեխնոլոգիաների, նանո-տեխնոլոգիայի և այլնի հետ, ինչպե՞ս կարելի է որակյալ կրթություն ստանալով՝ սեփական գիտելիքների, տաղանդի, հմտությունների շնորհիվ մասնակից դառնալ կյանքի առաջընթացին: Վերջերս «Մանկավարժություն» համդեսում («Կլոր սեղան», 2006, 3-4) Ս.Գալոյանը արդարացի կերպով նկատում է. «Դասագրքերն առ այսօր մնալով կրթության բովանդակության կառուցման գիտելիքային մոտեցման շրջանակներում՝ սովորողներին մատուցում են

պատրաստի գիտելիքներ: Ենթադրվում է, որ դրանք միանգամայն հավաստի աներեր ճշմարտություններ են, քանի որ չեն ներկայացվում իրենց պատմական զարգացման մեջ, չեն ընդգծվում դրանց ուժեղ և թույլ կողմերը, կիրառման ոլորտի սահմանափակությունները: Հասկանալի է, որ այս պարագան տարիների ընթացքում աշակերտների մեջ ձևավորում է ինտելեկտուալ անգործության որոշակի բարդույթ. բոլոր ճշմարտություններն այլևս հայտնագործված են և իրենց մնում է ընդամենը յուրացնել դրանք»:

Մինչդեռ դրա փոխարեն աշակերտի մեջ հարկ է ձևավորել՝ «ես կարող եմ» փաստարկված ինքնագնահատական տալու հմտությունը:

3. Ավագ դպրոցում սովորողների մասնագիտական կողմնորոշման խնդիրն առավել բազմաբնույթ է և ինքնատիպ: Բովանդակային առումով այստեղ առաջնային է մասնագիտությունների համակարգման, միմյանց միջև կապերի բացահայտման խնդիրը:

Կարևոր է նաև, որ սովորողներն իմանան ուսումնական առարկաների հետ մասնագիտությունների և տարբեր գիտությունների առնչությունները:

Լուրջ խնդիր է կյանքի շեմին կանգնած, հասուն անձի ինքնահաստատման և սոցիալական կյանքին արդյունավետորեն ներգրավվելու, հարմարվելու ունակության հարցը, ընտրած (ընտրելիք) մասնագիտության արժևորման և աշխատանքի շուկայում այդ մասնագիտության հանդեպ պահանջարկի ճիշտ գնահատման կարողությունը:

Սովորողը պետք է տարբերի ունակությունը, տաղանդը, շնորհը կարողությունից և հմտությունից: Նա պետք է կարողանա ճիշտ գնահատել ինքն իրեն, կարողանա պլանավորել սեփական ապագան՝ կարիերան, առաջընթացը:

Մասնագիտական կրթության հաստատությունների համակարգը սովորողներին նախապատրաստում է տնտեսական և սոցիալական ոլորտի որոշակի աշխատանքների: Որպես կանոն այդ հաստատությունների շրջանավարտներին տրվում է որակավորման աստիճան: Միջնակարգ կրթության ատեստատը պետք է երաշխավորի աշակերտի մասնագիտական կողմնորոշումը. այն է՝ ցանկացած մասնագիտությանն անհրաժեշտ ընդհանուր հմտությունների և որակների զարգացում՝ դպրոցի համար ընդունելի տարբերակով և սահմաններում:

Իհարկե, մասնագիտական կողմնորոշումը շատ ավելի լայն սոցիալական ընդգրկում ունի: Այն մի շարք պետական գերատեսչությունների խնդիր է, և սույն հոդվածն անդրադարձ է միայն հանրակրթության այդ բնագավառի որոշ հարցերին:

**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Սոցիալական կենտրոնների և հասարակական կազմակերպությունների դերն
արտադպրոցական կրթության զարգացման գործընթացում**

Խորհրդային Միությունում գոյություն ուներ կազմակերպված, արդյունավետ և մատչելի արտադպրոցական կրթության բավականին հաջող համակարգ: Սակայն մի շարք գործոնների (հիմնականում սոցիալական) ճնշման տակ այդ համակարգը հիմնովին փլուզվեց: Անցումային շրջանի հենց սկզբից արտադպրոցական կրթության ոլորտ մուտք գործեցին հասարակական կազմակերպությունները: Սակայն այդ փուլում հասարակական դաշտի գործունեությունն ուղղված էր առավել խոցելի խավերի երեխաների (անօթևան, հաշմանդամ, փախստական, ծնողազուրկ) կենսական խնդիրների լուծմանը: Մյուս կողմից, դպրոցական կրթությունը կորցրել էր կենսական լինելու իր նախկին ընկալումը, իսկ արտադպրոցական կրթությունը դիտվում էր որպես ավելորդություն: Այսօր որոշ սոցիոլոգներ արտադպրոցական կրթության վերացմամբ են բացատրում անգամ դասական երաժշտության նկատմամբ անցումային սերնդի երեխաների՝ այսօրվա երիտասարդների հետաքրքրության պակասը:

Արդեն 90-ականների կեսերից արտադպրոցական կրթության ոլորտում տեղաշարժ նկատվեց: Սակայն այն կազմակերպվեց և մնաց հասարակական, սոցիալական, կրոնական և միջազգային կառույցների գործունեության դաշտում, ինչը հիմնականում պայմանավորված էր այդ կառույցների առավել արդյունավետ գործունեությամբ: Հասարակական դաշտը, լինելով ավելի ճկուն, առավել համահունչ էր հասարակության ակնկալիքներին և պահանջներին, քանզի թե՛ մարդկային ռեսուրսներով և թե՛ պատրաստակամությամբ պետական կառույցները զիջում էին հասարակական դաշտին: Այս առումով աշխարհում ևս կիրառելի է արտադպրոցական կրթության կազմակերպման պետական պատվերի հանձնումը սոցիալական կենտրոններին և հասարակական կառույցներին: Իսկ որոշ երկրներում այդ ոլորտն ի սկզբանե գտնվում է հոգևոր կառույցների գործառույթների շրջանակում: Հայաստանում երկու մոտեցումն էլ կիրառելի է:

Այս երևույթն իր հետ արտադպրոցական կրթության ոլորտ բերեց նոր տարրեր. Աստվածաշնչի ուսուցում, հանդուրժողականության, մշակութային բազմազանության կարևորության դաստիարակում, բախումների կանխարգելման, շփումների, պատասխանատվության և այլ կարողությունների զարգացում: Այս բոլորը լրացնում են դպրոցական և անգամ բարձրագույն կրթության բացերը, քանզի այդ ամենն ուղղված է հասարակական էակի կերտմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշակերտների օրվա զգալի մասն անցնում է դպրոցի հսկողությունից դուրս: Ինչպե՞ս եք անցկացնում ձեր ազատ ժամանակը հարցին՝ շատ բարձր դասարանցիների տված պատասխանները մտահոգիչ են և բերում են այն համոզման, որ դպրոցականների զգալի մասն իր օրը չի պլանավորում և անց է կացնում տարերայնորեն: Մինչդեռ սա մի ժամանակ է, որ պետք է խելացիորեն օգտագործել՝ այն նպատակաուղղելով դպրոցականների ստեղծագործական ակտիվության բարձրացմանը:

Ժամանակի բնորոշ առանձնահատկությունը գիտության, ինֆորմացիայի և տեխնիկայի աննախընթաց զարգացումն է: Փոխվում է բարոյագիտական հասկացությունների բովանդակությունը, այն դառնում է ավելի բարդ ու դինամիկ: Աշակերտին այլևս չեն կարող հետաքրքրել այն դասընթացները, որոնք հոգևոր սնունդ չեն տալիս նրա մտքին, որտեղ աշակերտը չունի ակտիվ մասնակցություն և նախաձեռնելու հնարավորություն: Այսօր կրթական օջախները չեն կարող համաքայլ գնալ այն բոլոր զարգացումներին, որոնք առկա են մեր իրականության մեջ:

Ներկայիս գործող սոցիալական ու համայնքային կենտրոնները, հասարակական կազմակերպությունները լուծում են այնպիսի խնդիր, ինչպիսին է մանուկների, պատանիների և երիտասարդության զբաղվածությունը: Այստեղից բխում է մանկական հանցագործությունների թվի նվազեցումը, դպրոցական առաջադիմության վերելքը, որոշ դեպքերում նաև բարձր դասարանների աշակերտների հմտությունների և կարողությունների զարգացումը, մասնագիտության ձեռքբերումը և աշխատանքի տեղավորման խնդրի լուծումը:

Այս ոլորտում կան նաև մի շարք բացեր: Զգալի է երեխաների հետ աշխատելու էթիկայի մշակված ձևերի, փորձագիտությունների և իրավիճակային ուսումնասիրությունների բացակայությունը: Երեխաների հետ աշխատողները և անգամ քաղաքականություն մշակողները լավատեղյակ չեն «Երեխաների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի» դրույթներին (Հայաստանի կողմից վավերացվել է դեռևս 1992 թվականին): Այնուամենայնիվ, կոնվենցիայի հիման վրա մշակված «ՀՀ կառավարության 2004-2015թթ. գործողությունների պլան»-ում ներառված են քայլեր՝ ուղղված արտադպրոցական կրթության կազմակերպմանը: Ի լրումն դրա, ըստ կոնվենցիայի ստանձնած պարտավորությունների՝ կառավարությունը յուրաքանչյուր տարի պետք է ավելացնի նման ծրագրերի համար նախատեսված պետական հատկացումները:

Պետական աջակցության մեկ այլ դրսևորում է 2006 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Ոչ ֆորմալ կրթության մասին հայեցակարգը»: Այն բազմապատկում է ոլորտի մեթոդական հնարավորությունները՝ արտադպրոցական կրթությունը դարձնելով դասընթացային (թրեյնինգային), ինչը մեծ տարածում ունի ժամանակակից աշխարհում:

Արտադպրոցական կրթության զարգացման գործընթացին իրենց լայնածավալ գործունեությամբ նպաստում են սոցիալական կենտրոնները, հասարակական կազմակերպությունները: Նրանց ծրագրերում տեղ են գտել ուսուցման առաջադեմ մեթոդներ ու նոր ձևեր՝ համակարգչային տեխնիկայի լայն օգտագործմամբ, ինչն այսօր բացակայում է ֆորմալ կրթություն իրականացնող հաստատություններում:

Ուսուցում իրականացնող սոցիալական կենտրոնների և հասարակական կազմակերպությունների կողմից առավել կարևորվում է ուսուցման համեմատաբար կարճատև ընթացքը, ինչը թույլ է տալիս սովորողին առավել կարճ ժամկետներում և սակավ ֆինանսական միջոցներով հասնել ցանկալի արդյունքի:

Սակայն հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող կրթական և ուսուցողական ծրագրերը հաճախ գործում են առանց համակարգման, անջատ-անջատ և ինքնանպատակ:

Ուստի, որպեսզի սոցիալական կենտրոնները և հասարակական կազմակերպություններն առավել արդյունավետ գործեն և առավել մեծանանրանց դերը արտադպրոցական կրթության զարգացման գործընթացում, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները որպես առաջարկություն՝

- ՀՀ-ների՝ ուսուցման նոր մեթոդներ օգտագործելու, աշխատաշուկային արագ արձագանքելու, ուսումնամեթոդական նյութեր մշակելու, սոցիալական կենտրոնների հետ համագործակցելու փորձը կիրառել մասնագիտական կրթության ոլորտում ֆորմալ կրթություն իրականացնող հաստատություններում,

- միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող կրթական կամ ուսուցողական ծրագրերը համակարգել և ուղղորդել մեկ միասնական կենտրոնի կողմից:

Վարագդատ Կարապետյան
«Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ»
հասարակական կազմակերպության նախագահ
Գավառի Պետական Համալսարանի ուսումնական գծով պրոռեկտոր

**Հասարակական հատվածի դերը
արհեստագործական կրթության զարգացման գործում**

Արհեստագործական կրթության զարգացումը Հայաստանում կապված է մի շարք հիմնախնդիրների լուծման հետ: Դրանք կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

Հիմնախնդիր Ա.

Արհեստագործական կրթությունը հիմնված է միայն փորձի և ցածրորակ աշխատանքային պրակտիկայի վրա:

Հիմնախնդիր Բ.

Արհեստագործների երիտասարդ սերունդը չի կարողանում գտնել սեփական գործ հիմնելու հնարավորություն և երկար ժամանակ զբաղվում է ցածրորակ և ցածր վարձատրվող աշխատանքով:

Հիմնախնդիր Գ.

Արհեստավորներն ի վիճակի չեն կիրառել նոր տեխնոլոգիաներ և ժամանակակից մեթոդներ:

Հիմնախնդիր Դ.

Արհեստների զարգացում և մրցունակության աճ չկա:

Հիմնախնդիր Ե.

Արհեստագործների եկամուտների աճի տեմպերը զգալիորեն զիջում են տնտեսության այլ ոլորտներում առկա եկամուտների աճին:

Հիմնախնդիր Զ.

Արհեստագործ որակյալ կադրերը հեռանում են Հայաստանից:


Հիմնախնդիր Է.

Ցածր մրցունակության պատճառով արհեստագործական ոլորտը չի գրավում որակյալ մասնագետի ներուժով երիտասարդներին:

Համակարգային մոտեցման տեսանկյունից այս բոլոր հիմնախնդիրները մեկ ամբողջական օրգանիզմի տարրեր են: Դրանց գոյությունը փոխկապակցված է, և համակարգի յուրաքանչյուր սուբյեկտ իր վարքագծով նպաստում է այս ամբողջական օրգանիզմի տարրերի ամրապնդմանը:

Ստորև բերված սխեմայում փորձ է արված հիմնախնդիրները պատկերել մեկ ամբողջության մեջ:

Հիմնահարցերի դիտարկման շրջանաձև մոդել



«Արատավոր անիվի» ճեղքման հնարավորությունը

Ակնհայտ է, որ համակարգը ներառված է մի մեծ «արատավոր անիվի» մեջ: Անիվը կարելի է պատկերել տարբեր դիտանկյուններից: Ամեն անգամ կստացվի մի նոր անիվ: Փաստորեն մեկ առանձին հիմնախնդիրը կարող է տարբեր անիվների մաս կազմել:

Ստորև բերվում են անիվի ճեղքման միմյն այսօր հայտնի հիմնական պայմանները՝


- անիվը հնարավոր է ճեղքել միայն համակարգի ներսից՝ ներքին ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ,
- անիվի օղակների ակտիվ մասնակիցների առնվազն 60%-ը հակված է փոփոխելու առկա կարգը,

- անիվն ամբողջությամբ տեսանելի է անիվի օղակների բոլոր մասնակիցներին,
- օղակների մասնակիցները ի վիճակի են բաշխել “ճեղքման” դերերը, և յուրաքանչյուրը պատրաստ է կրել իր դերին համապատասխան պատասխանատվություն:


Այժմ տեսնենք, թե մասնակիցների ի՞նչ խմբեր կան արդեն ներկայացված անիվի մեջ:

ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՄԱՄՆԱԿԵՑՆԵՐ

Էական է հասարակական կազմակերպությունների դերի բացահայտումը անիվի ճեղքման գործում: Ընդհանուր համակարգը կարելի է պատկերել հետևյալ գծապատկերով:



Հասարակական կազմակերպությունների դերը



Հասարակական կազմակերպությունների դերն է.

- միասնական պատկերի դիմամիկայի բացահայտումը,
- միասնական պատկերի ներկայացումը մասնակիցներին,
- մասնակիցների միջև երկխոսության զարգացումը,
- միասնական պատկերում նոր դերերի ստեղծման նախաձեռնությունը կամ աջակցությունը:

**Կրթություն ողջ կյանքի ընթացքում. արհեստագործական ոլորտի
զարգացում, միջազգային կազմակերպությունների
դերն ու համագործակցության հեռանկարները**

Ձեկույցիս նպատակն է համառոտ ներկայացնել նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) ոլորտում առկա խնդիրները և միջազգային կազմակերպությունների դերը այդ խնդիրների լուծման գործում:

Համաձայն Եվրամիության հանձնաժողովի կողմից ընդունված «Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հուշագրի, այս ուսումնառությունն սկսվում է նախադպրոցական տարիքից և շարունակվում է մինչև թոշակային տարիք՝ ներառելով ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ամբողջ դաշտը:

Ֆորմալ ուսումնառությունը իրականացվում է կրթական և թրեյնինգ հաստատություններում, որոնք սովորողին տալիս են մասնագիտական որակավորում և շնորհում ճանաչված դիպլոմներ:

Ոչ ֆորմալ ուսումնառությունը գործում է հիմնական կրթական և թրեյնինգ համակարգերին զուգահեռ, սակայն, ի տարբերություն դրանց, պետական սերտիֆիկատներ չի շնորհում: Ոչ ֆորմալ կրթություն կարելի է ստանալ աշխատավայրում, հասարակական կազմակերպություններում և միություններում (երիտասարդական, արհ. միություններ, քաղաքական կուսակցություններ): Այն կարող են իրականացնել նաև այնպիսի կազմակերպություններ կամ ծառայություններ, որոնք կոչված են օժանդակելու պետական համակարգերի աշխատանքին (օրինակ՝ արվեստի, երաժշտության և սպորտի դասարաններ կամ քննությունների նախապատրաստող մասնավոր դասեր):

Ինֆորմալ ուսումնառությունը մեր կյանքի ամենօրյա ու բնական ուղեկիցն է: Ի տարբերություն ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունների, այն անպայմանորեն նպատակային չէ, և հնարավոր է անգամ անհատը չգիտակցի, որ դա գիտելիքի և հմտության աղբյուր է:

Ուսումնառության բոլոր երեք ձևերի նպատակն է նպաստել ակտիվ քաղաքացիության ձևավորմանը, անձի ինքնադրսևորմանը, նրա սոցիալական ներառմանը, ինչպես նաև զբաղվածության ապահովմանը:

Ժամանակակից ուսումնառության հիմնական սկզբունքները պետք է լինեն՝

- ուսանողակենտրոնությունը,
- բոլորի համար հավասար հնարավորությունների ապահովումը,
- ուսման որակի և արդիականության ապահովումը:

Փորձենք բացահայտել այն մարտահրավերները, որոնք առկա են այսօր միջին և նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության ոլորտում:

Սոցիալական գործընկերները ներգրավված չեն կրթական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի ստեղծման գործում, բացառությամբ որոշ դեպքերի, որոնք, սակայն, ընդհանուր իրավիճակի վրա ազդեցություն չունեն: Բացի դրանից, կրթական չափորոշիչները և ուսումնական ծրագրերը հիմնված չեն «հանգուցային կարողությունների» վրա: Շատ խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է նախ լուծել ՄԿՈՒ ոլորտի կառավարմանը և բարեփոխումներին սոցիալական գործընկերների ներգրավվածության խնդիրը: Այստեղ անհրաժեշտ է ստեղծել համագործակցության կայուն մեխանիզմներ բոլոր մակարդակներում (տեղական, մարզային և պետական):

Կրթության շարունակականությունն ապահովելու համար անհրաժեշտ է միջին և նախնական մասնագիտական կրթության համակարգում ներդնել կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը:

Պետությունը, հաճախ նաև հասարակությունը, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունը չի ընդունում իբրև լիարժեք կրթություն: Չնայած նրան, որ վերջին տարիների ընթացքում Հայաստանում շատ մասնագետներ փոխել են իրենց մասնագիտությունները՝ մասնակցելով վերաորակավորման ու վերապատրաստման դասընթացների, սակայն այդ դասընթացների ավարտական վկայականները պետության կողմից չեն ճանաչվում: Այս պարագայում անհրաժեշտ է մշակել ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության արդյունքների ճանաչման (ֆորմալացման) մեխանիզմներ:

ՄԿՈՒ համակարգի նկատմամբ հասարակության և սոցիալական գործընկերների վստահությունը մեծացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի ուսումնական ծրագրերի հավատարմագրումն իրականացվի անկախ մարմնի կողմից:

Ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ՄԿՈՒ հաստատություններում ներդնել ուսուցման ժամանակակից մեթոդներ, որոնք կերաշխավորեն առավել արդյունավետ ուսումնառություն: Բացի այդ, շատ կարևոր է նաև մոր կրթական տեխնոլոգիաների կիրառումը:

Հայաստանում շատ թույլ է կրթություն - աշխատաշուկա կապը, ինչի պատճառով մասնագիտական թե՛ նախնական և միջին, թե՛ բարձրագույն կրթական հաստատությունների շրջանավարտների մեծ մասը լրացնում է գործազուրկների բանակը՝ չնայած, որ Հայաստանի զարգացող

տնտեսությունը բարձր որակավորում ունեցող մասնագետների մեծ պահանջ ունի: Այս տեսանկյունից կարելի է պնդել, որ կրթության արդյունավետության բարձրացման համար աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության կուտակման և վերլուծության խնդիրը (տեղական, տարածքային և պետական մակարդակներում) առանցքային խնդիրներից մեկն է:

Ցավոք, Հայաստանում ցածր է մախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարկանիշը: Այն բարձրացնելու համար բոլոր մակարդակներում անհրաժեշտ է իրականացնել ոլորտի վարկանիշի բարձրացմանն ուղղված քաղաքականություն: Անհրաժեշտ է իրականացնել հասարակայնության տեղեկացվածության ընդլայնմանն ուղղված միջոցառումներ: Բացի վերը նշվածից, յուրաքանչյուր ՄԿՈՒ հաստատություն պետք է իրականացնի ակտիվ մարքեթինգային քաղաքականություն: Մասնագիտական կրթությունն անհրաժեշտ է դիտարկել որպես կրթական շուկային առաջարկվող ծառայություն, որը, ինչպես յուրաքանչյուր ապրանք, ենթակա է վաճառքի:

Ոչ պակաս կարևոր խնդիր են ՄԿՈՒ հաստատությունների անձնակազմի (ղեկավար կազմի, դասախոսների, վարպետների և այլն) ունեցած վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ և մասնագիտական որակավորումը: Նոր տնտեսական հարաբերությունները պահանջում են նոր վերաբերմունք աշխատանքի նկատմամբ և մասնագիտական նոր ունակություններ:

ՄԿՈՒ հաստատությունների մեծ մասի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան բարոյապես և ֆիզիկապես մաշված են և չեն կարող ապահովել ժամանակակից և մասնագիտական որակյալ կրթություն:

Պետական ՄԿՈՒ հաստատություններն իրենց համար իբրև նպատակային խումբ տեսնում են հիմնականում դպրոցների շրջանավարտներին՝ իբրև այդպիսին չնկատելով մեծահասակներին, որոնց նույնպես կարելի է առաջարկել կրթական ծառայություններ՝ ուղղված ինչպես մասնագիտական, այնպես էլ մշակութային, քաղաքացիական և անձի զարգացմանը: Բացի դրանից, ՄԿՈՒ հաստատությունները պետք է առավել ակտիվորեն ներգրավվեն տեղական քաղաքացիական, սոցիալական և մշակութային ծրագրերում: Ընդարձակելով ծառայությունների դաշտը՝ ՄԿՈՒ հաստատությունները միաժամանակ կկարողանան ընդլայնել իրենց ֆինանսավորման աղբյուրները:

ՄԿՈՒ, ինչպես նաև կրթական այլ հաստատությունների մեծ մասը հասանելի չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց: Բոլորի համար հավասար պայմանների ապահովումը յուրաքանչյուր հասարակության կարևորագույն խնդիրներից մեկն է: ՄԿՈՒ հաստատությունները հասանելի դարձնելով սահմանափակ կարողություններ ունեցող անձանց՝ նրանց հնարավորություն կտրվի իրենց կարողություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալ և դառնալ հասարակության լիարժեք անդամ:

Վերը նշված խնդիրների լուծման համար պետք է իրականացնել

մի շարք ծրագրեր, որոնց համար անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերի (ՀՀ կառավարություն, սոցիալական գործընկերներ, տեղական ինքնակառավարման մարմիններ, միջազգային կազմակերպություններ և այլն) մասնակցությունը:

Միջազգային կազմակերպությունները Հայաստանում արդեն մի քանի տարի ակտիվորեն աջակցում են ՄԿՈՒ համակարգի զարգացմանը: Գերմանական կառավարության ֆինանսավորմամբ GTZ-ի կողմից իրականացվել է բանկային ոլորտում միջին մասնագիտական կրթության ներդրման ծրագիրը, որի շրջանակներում Երևանում բացվել է ֆինանսաբանկային քոլեջ:

Եվրամիության TACIS ծրագրի շրջանակներում 2003 թ. Եվրամիությունն աջակցում է ՄԿՈՒ ոլորտի զարգացմանը: Այդ ծրագրի շրջանակներում մշակվել են ՄԿՈՒ հայեցակարգը և ռազմավարությունը, ինչպես նաև «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքը: Իրականացվել է նաև ՄԿՈՒ ոլորտի զարգացմանն ուղղված խոշոր ծրագիր:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից նույնպես իրականացվում է ՄԿՈՒ ոլորտի զարգացման ծրագիր, որի շրջանակներում մշակվել են մի շարք մասնագիտությունների կրթական չափորոշիչներ, բարելավվել են ՄԿՈՒ մի շարք հաստատությունների շենքային և նյութատեխնիկական պայմանները:

Բացի վերը նշվածից, մի շարք այլ միջազգային կազմակերպություններ (DVV international, USAID-CHE, «Անուշավան Աբրահամյան») հիմնադրամը և այլն) նույնպես աջակցում են Հայաստանում ՄԿՈՒ ոլորտի զարգացմանը: Միջազգային կազմակերպություններն իրենց աջակցությամբ կարևոր դեր ունեն Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում արդի համաշխարհային փորձի ներդրման գործում:

ՄԿՈՒ ոլորտի զարգացումը Եվրամիության հարևանության քաղաքականության՝ Եվրամիություն-Հայաստան գործողությունների ծրագրի բաղկացուցիչներից է, ինչը նշանակում է, որ Եվրամիությունը շարունակելու է աջակցել մասնագիտական կրթության զարգացմանը Հայաստանում:

Հայաստանում մասնագիտական կրթության զարգացման համար կարևոր դեր կարող են խաղալ նաև Եվրոպական համագործակցության ծրագրերը, ինչպիսիք են՝ «Լեռնարդո դա Վինչի» և «Գրունդտվիզ» ծրագրերը: Այս ծրագրերը տարբեր երկրների ՄԿՈՒ հաստատություններին թույլ են տալիս կոնսորցիումներ ստեղծել և համատեղ ծրագրեր իրականացնել, ինչը լայն հնարավորություններ է ընձեռում փորձի փոխանակման, մասնագետների որակավորման բարձրացման և միջազգային համագործակցության համար:

Ցավոք, հայաստանյան հաստատությունները դեռևս չեն կարող մասնակցել «Լեռնարդո դա Վինչի» և «Գրունդտվիզ» ծրագրերին: Հայաստանյան կազմակերպությունների մասնակցությունն այս ծրագրերին զարգացման նոր հեռանկարներ կբացի նրանց առջև:

**ԿՐԹԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՎ
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ**

Թբիլիսիի Երիտասարդաց տան հիմնադրամ

Տնտեսական, սոցիալ-մշակութային և տեխնոլոգիական ոլորտներում տեղի ունեցած խոշոր փոփոխությունների հետևանքով շատ երկրների առջև ծառացավ կրթական հիմնարար բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը: Վրաստանը ևս ընդունեց նոր տասնամյակի մարտահրավերները՝ սկսելով նոր բարեփոխումներ կատարել տարբեր ոլորտներում, այդ թվում՝ նաև կրթական ոլորտում:

Իլյա Շավժավաձեի անվան կրթական բարեփոխումների ծրագիրը նպատակ ունի բարեփոխել Վրաստանի նախնական, միջին և բարձրագույն կրթության համակարգը: Բարեփոխումների պատասխանատուն Վրաստանի կրթության և գիտության նախարարությունն է: Բարեփոխումների նպատակն է Վրաստանի երիտասարդներին տալ ժամանակակից որակյալ կրթություն՝ ընձեռնելով նրանց միջազգային աշխատաշուկայում և կրթական ոլորտում մրցակցելու աննախադեպ հնարավորություն:

Կրթական բարեփոխումները կառավարվում են ծրագրերի համակարգման կենտրոնի կողմից, որը հիմնադրվել է հասարակական օրենքի հիման վրա: Այն աջակցում է կրթության և գիտության նախարարությանը կրթական բարեփոխումների իրականացման գործում: Կենտրոնը երաշխավորում է բարեփոխումների ծրագրի տարբեր բաղադրիչների արդյունավետ համագործակցությունը և համակարգում նրանց գործունեությունը: Կենտրոնը ծրագրի բաղադրիչների թիմային ղեկավարներին աջակցում է դասընթացների կազմակերպման, օտար երկրում վերապատրաստման կամ որակավորման բարձրացման հարցերում, միաժամանակ մասնակցում է որոշումների կայացմանը:

Ծրագրերի համակարգման կենտրոնը գործում է Համաշխարհային բանկի պահանջների և որոշումների, ինչպես նաև Վրաստանի օրենսդրության համաձայն: Այն ապահովում է ծրագրի վարչական աջակցությունը, ֆինանսական կառավարումը, նախագծի գնահատումը և համապատասխան զեկույցների պատրաստումը:

Կենտրոնում աշխատում են տեղացիներ՝ ընտրված մրցութային կարգով: Կենտրոնի ղեկավարի թեկնածուին առաջադրում է կրթության և գիտության նախարարությունը, թեկնածությունը հաստատում է Վրաստանի նախագահը:

Կրթական բարեփոխումների ծրագրի բաղադրիչներն են՝

- ուսուցիչների մասնագիտական զարգացում,
- միասնական պետական քննություններ,

- ազգային ուսումնական ծրագիր և դասագրքեր,
- կրթական համակարգի քաղաքականություն և ռազմավարություն,
- կրթական կառավարման տեղեկատվական համակարգ,
- հասարակայնության հետ կապեր:

Ուսուցիչների մասնագիտական զարգացում

Այս բաղադրիչի առաջնային նպատակներն են ուսուցիչների համար կրթական երկարաժամկետ և ճկուն համակարգի ստեղծումը, կրթական անձնակազմի մասնագիտական որակավորման բարձրացումը, անհատական հմտությունների և գիտելիքների ընդլայնումը: Այս ամենը կրթական համակարգը կապահովի համապատասխան անձնակազմով, ինչը հնարավորություն կտա հաջողությամբ իրականացնել կրթական բարեփոխումները՝ բարելավելով դասավանդման և ուսումնառության գործընթացը:

Ուսուցիչների մասնագիտական զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է՝

ա. առավել ընդարձակ տեղեկություններ տրամադրել կրթական ոլորտում առկա այն փոփոխությունների մասին, որոնք անհրաժեշտ են դասավանդման գործընթացի և բարեփոխումների լիարժեք իրականացման համար:

բ. կատարելագործելով կրթական անձնակազմի մասնագիտական զարգացման ծրագիրը՝ քաջալերել կրթական անձնակազմի մասնակցությունը բարեփոխման գործընթացին, բարելավել նրանց մասնագիտական հմտությունները և նպաստել համագործակցության ստեղծմանը: Այն ներառում է՝

- դպրոցների դրամաշնորհային ծրագիր,
- դպրոցների ցանց,
- դպրոցներում մասնագիտական զարգացում,
- ուսուցիչների համազգային ժողով,
- տարրական և միջնակարգ դպրոցի ուսուցիչների նեղ մասնագիտական ունակությունների զարգացում՝ ըստ ազգային ուսումնական մոդելի:

գ. մշակել դասավանդման որակյալ ծրագիր,

դ. մշակել ուսուցիչների հավատարմագրման մեխանիզմներ և մասնագիտական չափորոշիչներ:

Ազգային ուսումնական ծրագիր և դասագրքեր

Ազգային ուսումնական ծրագիր և դասագրքեր ենթաբաղադրիչի նպատակն է մշակել՝

ա. ազգային ուսումնական ծրագրի Վրաստանի միջնակարգ դպրոցների համար,

բ. ազգային ուսումնական ծրագրի ներդրման մեթոդներ ու տեխնիկա,

գ. աշխատանքների գնահատման համակարգ՝ ըստ ազգային ուսումնական ծրագրի,

դ. միջնակարգ դպրոցների ուսուցման բարելավման հանձնարարականներ,

ե. դասագրքերի և հավելյալ նյութերի կազմման գլխավոր ուղղություններ,

զ. դասագրքերի և հավելյալ նյութերի պատրաստում,

է. «Ներառական կրթության» ծրագրի գործունեության պլան:

Ազգային ուսումնական ծրագրում ներառված են ուսումնական գործընթացի հետևյալ տարրերը՝ յուրաքանչյուր առարկայի չափորոշիչները, ուսումնառության և դասավանդման հիմնական սկզբունքները, մեթոդները, դպրոցական կյանքի կազմակերպման հանձնարարականները, առաջնային մեթոդներն ու մոտեցումները և այլն:

Ազգային ուսումնական ծրագրում աշխատում է մասնագետների վեց խումբ ըստ հետևյալ առարկաների՝

ա. վրացերեն լեզու և գրականություն,

բ. Վրաստանի պատմություն և հասարակագիտություն,

գ. բնական գիտություններ,

դ. օտար լեզուներ,

ե. գեղագիտություն/արհեստագործություն/ֆիզկուլտուրա,

զ. մաթեմատիկա:

Վրաստանի պատմության և հասարակագիտության խումբն ուսումնական ծրագրեր է կազմում պատմության, աշխարհագրության, կրոնի և քաղաքացիական կրթության դասընթացների համար: Բնական գիտությունների խումբն աշխատում է քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության ուսումնական ծրագրի շուրջ: Օտար լեզուների խումբը մշակում է ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն և անգլերեն լեզուների ուսուցման ծրագրերը: Այս վեց խմբերում աշխատում են մասնագետներ ոչ միայն կրթական բարեփոխումների ծրագրի անձնակազմից, այլ նաև խորհրդակցական խորհրդից, որի մեջ ներգրավված են ուսուցիչներ, ուսանողներ, բարձրագույն կրթության և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև հրատարակված գրքերի հեղինակներ:

Միաժամանակ վրաց հրատարակիչների համար կազմակերպվում են սեմինարներ՝ անհրաժեշտ դասագրքերը նոր չափորոշիչներով հրատարակելու նպատակով: Ժամանակակից դասագրքերի և շուկայի պահանջների

վերաբերյալ սեմինարներ են անցկացվում մաս հրատարակիչների, խմբագիրների և շուկայագետների կողմից ներկայացված հեղինակների համար:

Կրթական համակարգի քաղաքականություն և ռազմավարություն

Կրթական համակարգի քաղաքականություն և ռազմավարություն ենթաբաղադրիչի ստեղծումը պայմանավորված էր կրթական քաղաքականության բացակայությամբ: Խորհրդային տարիներին Վրաստանի կրթության և գիտության նախարարությունից չէր պահանջվում զարգացնել կրթական քաղաքականություն, քանի որ նախարարությունը, ըստ էության, ներկայացնում էր մի մարմին, որը պարզապես կատարում էր կենտրոնի (Մոսկվայի) հրահանգները: Վրաստանի անկախացումից հետո նախարարությունը կանգնեց ազգային կրթական քաղաքականություն մշակելու և այն գործադրելու անհրաժեշտության առջև: Նման քաղաքականություն իրականացնելու համար փորձառու մասնագետներ չունենալու պատճառով նախարարության համապատասխան ենթաբաժինը ներառվեց կրթական բարեփոխումների ծրագրի մեջ, իսկ բաժնի աշխատակիցները նկատվեցին իբրև նախարարի տեխնիկական խորհրդատվության խումբ: Վերջինս մշակում է խնդիրների լուծման մի քանի հնարավոր տարբերակներ (մոդելներ) և ներկայացնում դրանք նախարարության պաշտոնյաներին՝ վերջնական որոշում կայացնելու համար: Այսպիսով՝ այս խմբին կարելի է համարել նախարարության «մտավոր կենտրոն», որը զբաղվում է կառավարման խնդիրներով:

Ներկայումս խումբը զբաղված է հետևյալ խնդիրների լուծմամբ՝

ա. կրթական համակարգի կառավարման կառույցների վերակազմավորում,

բ. մարդկային ռեսուրսների օպտիմալացում,

գ. ֆիզիկական ռեսուրսների օպտիմալացում,

դ. ֆինանսական ռեսուրսների օպտիմալացում:

Այս խմբին խորհրդատվական ծառայություններ է մատուցում Հարվարդի համալսարանը:

Կրթական կառավարման տեղեկատվական համակարգ

Կրթական կառավարման տեղեկատվական համակարգի նպատակն է կրթական համակարգի առանձին բաղադրիչներին և կազմակերպիչներին իրենց գործունեության առնչությամբ ժամանակին ապահովել պիտանի, անհրաժեշտ, արժեքավոր և հավաստի տեղեկատվություն՝ համապատասխան կառավարման, պլանավորման և որոշումներ ընդունելու նպատակով: Կրթական կառավարման տեղեկատվական համակարգի նպատակն է ապահովել՝

- **ի՞նչ** - ճշգրիտ, հավաստի, արժեքավոր և պիտանի տեղեկատվություն,
- **ո՞ւմ** - կազմակերպիչներին (աշխատակիցներին, ենթաբաժիններին, գործակալություններին և այլն),
- **ե՞րբ** - ժամանակին,
- **ինչպե՞ս** - համապատասխան կերպով,
- **ինչի՞ համար** - պատշաճ կառավարման, պլանավորման և համարժեք որոշումներ կայացնելու համար:

Խմբի աշխատանքային խնդիրներն են՝

- ա. 12-ամյա դպրոցների աշակերտների մարդասահմարը,
- բ. կրթության և գիտության նախարարության ներքին ցանցը,
- գ. կրթական աշխարհատեղեկատվական համակարգը,
- դ. կրթական կառավարման համակարգի մասին համացանցային տեղեկատվությունը:

Հասարակայնության հետ կապեր (ենթաբաղադրիչ)

Հասարակայնության հետ կապերի բաժինն սպառնիչ տեղեկատվություն է տալիս Վրաստանում կրթական բարեփոխումների կատարման վերաբերյալ: Մոցիոլոգիական հետազոտությունների միջոցով պարբերաբար ուսումնասիրվում է հասարակական կարծիքը, ուստի բարեփոխումներն իրականացնելիս հաշվի է առնվում շահագրգիռ անձանց կարծիքը: Սա ապահովում է կապը հասարակության և բարեփոխումներ իրականացնող խմբի միջև:

Ենթաբաղադրիչը՝

- ա. կազմակերպում է մամուլի ասուլիսներ,
- բ. բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում մամուլին,
- գ. բարեփոխումների վերաբերյալ պատրաստում է հեռուստատեսային հոլովակներ,
- դ. ծրագրերը ներկայացնում է տեղական կառույցներին և կազմակերպում քննարկումներ,
- ե. բարեփոխումների շրջանակներում պարբերաբար հրատարակում է կատարված աշխատանքների մասին տեղեկագրեր,
- զ. անցկացնում է հասարակական կարծիքի հարցումներ՝ բարեփոխումների ընթացքում արդյունքներն օգտագործելու նպատակով:

Թբիլիսիի Երիտասարդաց տան հիմնադրամի (ԹԵՏՀ) կողմից իրականացվող կրթական ծրագրերի մեծ մասում հաշվի են առնված կրթական

բարեփոխումների տարրերն ու սկզբունքները: Կրթական նպատակներ ունենալուց բացի, այս ծրագրերը օգնում են սոցիալական տարբեր շերտերի երեխաների և երիտասարդների սոցիալական ինտեգրմանը, ինչն իր հերթին նպաստում է նրանց անձի ձևավորմանը, մարդկային գլխավոր արժեքների մասին ճանաչողության զարգացմանը:

ԹԵՏՀ-ն վրացական հասարակական կազմակերպություն է, որը բարելավում է սոցիալապես անապահով, մտավոր և ֆիզիկական թերություններով մարդկանց կենսապայմանները՝ Վրաստանի ողջ տարածքում իրականացնելով այնպիսի ծրագրեր, որոնք զարգացնում են ինքնավստահություն, նպաստում են ֆիզիկական և մտավոր առողջությանը, հասարակության զարգացմանը և արագ կողմնորոշմանը: ԹԵՏՀ-ի առաքելությունն է բոլորի համար ստեղծել ջերմ, ապահով և աշխույժ միջավայր:

Իր գործունեության ընթացքում ԹԵՏՀ-ը իրականացրել է զանազան կրթական և վերականգնողական ծրագրեր: Դրանցից շատերը խոցելի խմբերի երեխաների, պատանիների, երիտասարդների և մեծահասակների համար են, որոնք հնարավորություն են տալիս նրանց ձեռք բերել որակյալ կրթություն, շուկային հարմարվելու հմտություններ, ինչը չէին կարող ունենալ իրենց կարգավիճակի պատճառով: Որակյալ ուսուցումն այնպիսի ճոխություն չէ, որ մարդը կարող է թույլ տալ իրեն հիմնական կարիքները բավարարելուց հետո միայն. կրթությունը առաջնային պետք է համարել կյանքի ցանկացած հանգամանքներում: Երկրի զարգացվածության աստիճանը մեծապես կախված է կրթական համակարգից և որակյալ ուսումից: Ուսումը դեպի ազատություն տանող ուղի է՝ բառի ամենալայն իմաստով: Կազմակերպության առաքելության հիմնական նպատակներն են՝

- **Միջին մասնագիտական կրթություն**

ԹԵՏՀ-ն կազմակերպում է օտար լեզուների, համակարգչային հմտությունների, արվեստի, լրագրության, պարի, երաժշտության, տեսանկարահանման և լուսանկարչության, փոքր բիզնեսի զարգացման, հասարակական կազմակերպությունների և երիտասարդական կազմակերպությունների ծրագրերի զարգացման դասընթացներ: Դրանց զուգահեռ կազմակերպվում են նաև առանձին միջոցառումներ՝ համերգների, դրամատիկական ներկայացումների հաճախումներ, ցուցահանդեսների այցելություններ:

- **Լրագրության և լրատվության ծրագիր**

Փորձառու լրագրողների ղեկավարությամբ ծրագրի մասնակիցները ձեռք են բերում հմտություններ լրագրության և լրատվության ասպարեզում, հրատարակում են իրենց սեփական թերթը: Թերթում զետեղվում են երիտասարդական նվաճումների, նրանց կյանքի և գործունեության մասին պատմող նյութեր, երիտասարդներին մտահոգող խնդիրների մեկնաբանություններ: Տեխնիկական միջոցները և համակարգչային ծրագրերն

ուսանողներին հնարավորություն են տալիս սովորել տեսանկարահանում և լուսանկարչություն:

- Իրականացվում է **բախումների փոխակերպման հատուկ դասընթաց**: Այն խնդրի՝ ոչ հարկադիր շփումների, հավասար բանակցությունների և խորհրդածությունների միջոցով ընդհանուր լուծումներ է առաջարկում՝ մասնակիցների մոտ դրական վերաբերմունք սերմանելով այլ էթնիկական և կրոնական խմբերի նկատմամբ: Դասընթացը զարգացնում է նաև դեկավարման հմտություններ, ինչն ընդլայնում է հասարակական աշխատանքի հնարավորությունները և փոքր բիզնեսի զարգացումը:

- **Հոգեբանական խորհրդատվություն**

Այս դասընթացներին հաճախում են իրենց բնակավայրերը հարկադրաբար լքած պատանիներ, ծնողազուրկ երեխաներ և դպրոցականներ, ովքեր ի վիճակի չեն մասնակցելու արտադասարանական լրացուցիչ ծրագրերին: Բարձրակարգ հոգեբանները ուսուցիչների հետ միասին անհրաժեշտության դեպքում փորձում են պարզել աշակերտների խնդիրները և անհրաժեշտ խորհուրդներով օգտակար լինել նրանց և նրանց ընտանիքներին, հետևում են երիտասարդների առաջընթացին:

- **Ներառական կրթություն**

Սա հատուկ մշակված ծրագիր է, որը ուսուցման ու համատեղ այլ աշխատանքների միջոցով նպաստում է նորմալ, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող և ռիսկերի ենթակա երեխաների սոցիալական ինտեգրմանը:

- ԹԵՏՀ-ի հաջողության և կայունության հարցում կարևոր է թե՛ **տեղական, թե՛ միջազգային կամավորների** դերը, որոնք իրականացնում են ուսուցողական և կրթական դասընթացներ, անց են կացնում զանազան թեմաներով սեմինարներ և գիտաժողովներ, աջակցում զանազան աշխատանքներին և տարեկան միջոցառումներին:

- **Կրթություն ողջ կյանքի ընթացքում**

Այս ծրագրերը նախատեսված են մեծահասակների (հատկապես կանանց) համար և առաջարկում են մասնագիտական ուսուցման որակյալ ծրագրեր և մասնագիտական հմտությունները **բարելավող** դասընթացներ:

- **Ակումբային գործունեություն**

Հետևելով ավանդույթներին՝ ԹԵՏՀ-ն աճեցրել է երիտասարդ կամավորների նոր սերունդ: Այս սերունդը հիմնել է բազմաթիվ նոր ակումբներ՝ կինոյի, բանավեճերի, հեռուստատեսային և վիդեո ակումբներ, ինչպես

նաև ստեղծել է գիղերի և թարգմանիչների խմբեր: Այս ամենը երիտասարդ կամավորների բազմապիսի ծրագրերի և գործունեության շրջանակներում ստեղծված խմբերի ողջ ցանկը չէ: Ներկայումս նրանք ակտիվորեն մասնակցում են ԹԵՏՀ-ի ամենօրյա աշխատանքներին և դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը: Վերջինս երիտասարդներին աշխատանքների մեջ ներգրավելուց բացի, հատուկ կրթության միջոցով նրանց սովորեցնում է նաև հանդուրժողականություն և բարեգործություն: Անկախ սեռից, հասարակական խավից և տարիքից նրանցից շատերը հնարավորություն ունեն ստանալ որակյալ կրթություն, մասնակցել դասընթացների և հատուկ ծրագրերի՝ այս ամենի համար ստանալով նաև կրթաթոշակ:

Իրան ավագ սարկավագ Դիդենկո (Ուկրաինայի Ուղղափառ Եկեղեցի)
«Հավատ, Հույս, Մեր» համաուկրաինական
քարեգործական հիմնադրամի տնօրեն

Քարեփոխումներն Ուկրաինայի կրթական համակարգում

Անցած տարեվերջին կրթության նախարարության նախաձեռնությամբ տեղի ունեցավ բարձրագույն ուսումնական հաստատություններում (ԲՈՒՀ) գիտության զարգացման հարցերին նվիրված միջճյուղային խորհրդակցություն: Խորհրդակցության նպատակն էր ձևակերպել ԲՈՒՀ-երում գիտության զարգացման, բարձրագույն կրթահամակարգը որակական նոր մակարդակի անցնելու խնդիրները և որոշումներ ընդունել դրանց վերաբերյալ՝ Բոլոնյան գործընթացի առաջադրանքների իրականացման պայմաններում, որին Ուկրաինան միացել է 2005 թվականի մայիսին:

Նախատեսված է, որ Ուկրաինայում կրթությունն ամբողջովին պետք է անցնի Բոլոնյան համակարգի մինչև 2010 թվականը: Ժամկետները սահմանվել են Բոլոնյան գործընթացով զբաղվող խմբի կողմից և Բոլոնյան հռչակագրով: 2007 թվականին նախատեսված է նախարարության գործունեության մոնիտորինգ՝ կապված եվրոպական կրթական տարածք ստեղծելու հետ, 2010 թվականին՝ բարձրագույն կրթության լիովին համապատասխանեցում Բոլոնյան գործընթացի պահանջներին և սկզբունքներին:

Տվյալ գործընթացի հայեցակարգային սկզբունքների իրականացման համար Ուկրաինայում անհրաժեշտ է՝

- կատարելագործել բարձրագույն կրթության երկփուլային կառուցվածքը,
- ընդունել դիպլոմների, աստիճանների և որակավորումների համար թափանցիկ և ըմբռնելի սանդղակավորում,
- օգտագործել միասնական համակարգ կրեդիտային միավորների և դիպլոմի ներդիրի համար,
- հաշվի առնել կրթության որակի վերահսկման և հավատարմագրման եվրոպական փորձը,
- խրախուսել և զարգացնել եվրոպական որակի չափորոշիչները,
- վերացնել ուսանողների, դասախոսների և հետազոտողների ազատ տեղաշարժմանը խանգարող խոչընդոտները,
- արմատավորել բարձրագույն կրթության և գիտության ինտեգրման ժամանակակից մոտեցումներ մագիստրոսների և ասպիրանտների պատրաստման գործում,
- ապահովել ինքնավարության և ինքնակառավարման հետագա զարգացում բարձրագույն կրթության և գիտության համակարգում:

Հարկ է նշել, որ Բոլոնյան գործընթացը կարևոր մեխանիզմ է երկրների և նրանց կրթահամակարգերի հարաբերությունների փոխընթերցման և

օպտիմալացման համար: Սակայն բարձրագույն ազգային կրթահամակարգի վերակազմավորումը և արդիականացումն անհրաժեշտ է իրականացնել երկու մակարդակներում:

Ինչպես հայտնի է, ուսուցման երկփուլային համակարգը նախատեսում է անցում եվրոպական համակարգի՝ ըմբռնելի և համեմատելի աստիճաններով: Ուկրաինական ԲՈՒՀ-երում վերջինիս ներդրումն իրականացվում է մասնագիտական ծրագրային ուսուցումը փոխարինելով բակալավր-մագիստրոս համակարգով: Այս ընթացքում առավել հաճախ հիշատակելի խնդիրն այն է, որ ուսուցման ամբողջական ծրագրի փոխարինումը երկփուլայինով կատարվում է մեխանիկորեն: Այդպես ուշադրությունից դուրս է մնում բովանդակային ծրագրային փոփոխություններ կատարելու հարցը:

Բացի այդ, կրթության երկփուլային համակարգի ներդրումը ենթադրում է, որ ուսման առաջին փուլի՝ բակալավրիատի ավարտից հետո տրվող աստիճանն աշխատանքի եվրոպական շուկայում որակավորման բավարար մակարդակ է:

Վերլուծելով կրթության ոլորտում օրենսդրական դաշտի արդի փոփոխությունները՝ կարելի է փաստել, որ ներկայումս տեղի է ունենում համալսարանների կառուցվածքի ինտենսիվ վերակազմակերպում, անց է կացվում վարչական բարեփոխում և որոշ վերակառուցում կրթահամակարգի ոլորտում: Բարձրագույն կրթական հաստատությունների մեծ մասում արդեն ներդրված է մոդուլային-վարկանիշային համակարգը, որը նախատեսում է առարկաների ուսուցման գործընթացի բաժանում առանձին մասերի, որոնք ստացել են «մոդուլ» անվանումը: Բացի այդ, ուսանողի գիտելիքների գնահատումն իրականացվում է հարյուր բալանոց սանդղակով, որն եկել է փոխարինելու ավանդական հինգ բալանոցին:

Հաշվի առնելով գնահատման նախորդ համակարգի մի շարք թերություններ՝ Կրթության նախարարության կողմից 2003թ. ապրիլի 24-ի որոշմամբ կրեդիտա-մոդուլային համակարգի ներդրումը նկատվում է հրատապ:

Կրթության նախարարությունը բարձրագույն կրթության համակարգում նախատեսում է բարեփոխումներ կատարել բարձրագույն կրթական հաստատությունների ցանցի կարգավորման ու համալսարաններում գիտության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Սակայն առկա են մի շարք խնդիրներ, որոնք կասեցնում են հայրենի գիտության մուտքը եվրոպական գիտա-կրթական տարածք: Մասնավորապես, 2000 թվականից սկսած նկատվում է երիտասարդ գիտական կադրերի դրական շարժ՝ 13 հազարից մինչև 17,6 հազար մարդ՝ 2006 թվականին: Աճում է նաև գիտական թեզերի պաշտպանությունների քանակը. 2000 թվականին՝ 9%, 2006 թվականին՝ 25%: Բացի այդ, միջին հաշվով ավարտում են ավելի քան երեք հազար ասպիրանտ և հարյուր հիսուն դոկտորանտ: Սակայն հարցական է, թե ինչո՞ւ է նման դեպքում թեկնածուների և գիտության դոկտորների միջին տարիքը

կազմում 50-60 տարեկան:

Կրթության նախարարն առաջարկում է ստեղծել խրախուսման և գիտական աշխատանքներին ուսանողների ներգրավման մեխանիզմ: Օրինակ՝ լավագույն գիտական աշխատողին տրամադրել դրամաշնորհ՝ արտասահմանում գիտական ստաժավորում անցնելու համար:

Կրթության նախարարությունն սկսել է «Գիտությունը համալսարանում» 2008-2010թթ.» պետական նպատակային հայեցակարգի մշակումը:

Չնայած անցումը Բոլոնյան համակարգի շարունակական ու բարդ գործընթաց է, սակայն այն արդեն իսկ տալիս է իր դրական արդյունքները: Կրթության վերակազմակերպումը թույլ է տալիս ստեղծել բարձր որակավորման աշխատանքի միասնական շուկա, բարձրագույն կրթության աստիճանների և համապատասխանաբար դիպլոմների ստանդարտացման շնորհիվ ապահովում են դասախոսների և ուսանողների շարժունակությունը: Միաժամանակ աճում է մրցակցության աստիճանը կրթական ծառայությունների շուկայում, ինչն ստիպում է համալսարաններին բարելավել սեփական իմիջը կրթության որակի բարձրացման ճանապարհով և ապահովել գիտելիքների մի մակարդակ, որն ուսանողին կերաշխավորի ապագայում աշխատանք գտնել աշխատանքի եվրոպական շուկայում:

Ինչ վերաբերում է դպրոցական կրթահամակարգի բարեփոխումներին, ապա նախարարների կաբինետը 2007-2010թթ. համար հաստատել է «Ապագայի դպրոց» ծրագրի հայեցակարգը:

Հաստատված հայեցակարգի համաձայն նախատեսվում է ստեղծել նորագույն ուսումնա-մեթոդական և տեղեկատվական ապահովվածությամբ, հզոր կադրային ներուժ և տեխնոլոգիական բարձր մակարդակ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանց:

Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել կրթական ծառայությունների մատուցման մեխանիզմը, նորագույն հաստատություններում փորձարկել կրթական համակարգի զարգացմանն ուղղված ինովացիոն մոդելներ:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել երկու փուլով: Առաջին փուլում (2007-2008թթ.) նախատեսվում է բարելավել նորմատիվային-իրավական բազան, մշակել դպրոցական շինությունների կառուցման կամ դրանց վերակառուցման նախագծային-տեխնիկական փաստաթղթերը, ձևավորել մանկավարժական կոլեկտիվներ և սահմանել նրանց աշխատանքի վճարման պայմանները, կազմակերպել նորագույն հաստատությունների գործունեությունը, ներդնել առաջադեմ ինովացիոն տեխնոլոգիաներ, նախապատրաստել ու հրատարակել ուսումնա-մեթոդական գրականություն և հիմնել տեղեկատվական-գրադարանային կենտրոններ:

Երկրորդ փուլում (2009-2010թթ.) նախատեսվում է ապահովել նորագույն հաստատությունների աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին, մրցույթներին և մրցախաղերին, աշակերտների մասնագիտական

կողմնորոշման համակարգի փորձարկումը, նորագույն հաստատությունների գործունեության վերաբերյալ հրատարակությունների նախապատրաստումն ու հրատարակումը, միջազգային կազմակերպությունների և կրթական հաստատությունների հետ կապերի հաստատումը, մասնակցությունը միջազգային կրթական նախագծերի իրականացմանը և երիտասարդական կազմակերպությունների գործունեությունը:

Հարկ է խոսել կրթահամակարգի ևս մի բարեփոխման մասին: Այս տարի Ուկրաինայի դպրոցականների 30%-ը (Կիևում այդ թիվը կազմում է 95%) անկախ արտաքին թեստավորում անցան «ուկրաիներեն լեզու», «մաթեմատիկա», «Ուկրաինայի պատմություն» առարկաներից: ԲՈՒՀ ընդունելության ժամանակ թեստավորման գնահատականները աշակերտների ցանկությամբ կարող են հաշվվել իբրև ընդունելության քննությունների գնահատականներ:

Ձարգացում՝ յուրաքանչյուր կազմակերպության կայունության միակ հուսալի հիմքը

Ձեկույցի բովանդակությունը

- Սոցիալական աշխատանքի զարգացմանը խոչընդոտող գործոններ
- Կայունության գործոններ. հիմնական հնարավորություններն ու ռիսկերը
- Առաջնահերթություններ և հիմնական խնդիրներ
- Առաքելության գործունեությունը 2006-2007 թթ.. ծրագրեր և նախագծեր

Բելառուսում սոցիալական աշխատանքի զարգացմանը խոչընդոտող գործոնները

1. Սոցիալական աշխատանքներին հատկացվող **ֆինանսական անբավարար միջոցները**՝ պայմանավորված ընդհանուր եկեղեցական կյանքի վերաշինության անհրաժեշտությամբ (եկեղեցական շատ միջոցներ ծախսվում են եկեղեցիների կառուցման և ավերված վանքերի վերակառուցման, հոգևոր դպրոցների կենսագործունեության վերականգնման և ընդհանուր եկեղեցական կառույցների՝ ներառյալ ծխերի ու համայնքների արդյունավետ աշխատանքի կազմակերպման համար),

2. զանազան կազմակերպությունների, այդ թվում նաև եկեղեցիների բարեսիրական գործունեության համար **օրենսդրական դաշտի անկատարությունը** (Բելառուսում մինչ այժմ չկա բարեգործության մասին օրենք),


3. եկեղեցական սոցիալական ծառայության համար **հատուկ պատրաստված կադրերի պակասը**, ինչպես նաև եկեղեցու միջոցներով այդ կադրերի վճարումներն ապահովելու անհնարինությունը,

4. կրոնական, հասարակական և պետական կազմակերպությունների միջև **սերտ համագործակցության բացակայությունը**:

Թեև Եկեղեցին և պետությունը հասարակության հոգևոր վերազարթոնքի նպատակով ժամանակ առ ժամանակ համատեղ աշխատելու ցանկություն են հայտնում, սակայն աշխատանքներն ընթանում են ոչ այն արդյու-

նավետությամբ, որքան ցանկալի է: Օրինակ՝ 2003 թվականին Բելառուսի Հանրապետության և Բելառուսի Ուղղափառ Եկեղեցու միջև ստորագրվել է Համագործակցության համաձայնագիր, որը նախանշում է հիմնական ուղղությունները փոխգործակցության ու սահմանում համագործակցության սկզբունքներն ու նպատակը: Կարևորագույն այդ փաստաթղթի ստորագրման ժամանակ Ֆիլարետ միտրոպոլիտը նշեց, որ վերջին տարիներին մեր հանրապետությունում աստիճանաբար և հետևողականորեն տեղի է ունենում հոգևոր վերածնունդ, հոգևոր և բարոյական ավանդույթների վերադարձ կյանքի տարբեր ոլորտներ: Ասվածի վկայությունն են Եկեղեցու անկաշկանդ զարգացումը, Եկեղեցու և պետության համատեղ կազմակերպած տարբեր մակարդակի միջոցառումները, Եկեղեցու կարևորագույն տոների ճանաչումը պետության կողմից, պետության աջակցությունը եկեղեցական շինությունների, մշակութային հուշարձանների կառուցմանը և վերակառուցմանը, եկեղեցական կրթության ընդլայնմանը և սոցիալական գործունեությանը: 2002 թվականին ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը վկայում է հասարակության հոգևոր-բարոյական կյանքի և աճող սերնդի դաստիարակության նկատմամբ պետական գործիչների ուշադրության մասին: Սակայն տեղային մակարդակներում հաճախ չեն գործում ինչպես օրենքը, այնպես էլ Համաձայնագիրը, ինչը թույլ չի տալիս հույս դնել պետության կողմից իրապես գործուն աջակցության վրա:

Կրոնական պատկանելությամբ կազմակերպությունների կայունության գործոնները



Դոնորներ/դրամաշնորհներ

Հնարավորություններ

- Հնարավորություն են ընձեռում ուսուցանել ժամանակակից չափորոշիչներով և ընթացակարգով հայտեր և հաշվետվություններ կազմելու ձևերը, որով մեծանում են ինչպես առանձին համայնքների, այնպես էլ ընդհանուր եկեղեցու հնարավորությունները,
- Շատ հաճախ դոնոր կազմակերպության վերլուծությունը թույլ է տալիս ներքին խնդիրը տեսնել այլ տեսանկյունից, ինչը նոր հեռանկարներ է բացում տվյալ խնդրի իրականացման համար,
- Դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների գործունեության մեջ առավել հաճախ առիթ ենք ունենում տեսնելու անկեղծ շահագրգռվածություն մեր կազմակերպության գործերի հանդեպ, մեզ օգնելու և մեր դժվարությունները կիսելու ցանկություն,
- Այս ամենը երկար տարիներ ապահովել է մեր գործունեության ֆինանսական աջակցությունը:

Ռիսկեր

- Որքան էլ դոնորները մեզ երկար աջակցեն, այսպես թե այնպես, այն **ժամանակավոր բնույթ** ունի. այսինքն՝ ի սկզբանե պետք է ընդունել արտաքին օգնության ժամանակավոր լինելու իրողությունը,
- Շատ բան է կախված **մարդկային գործոնից**: Երբեմն հայտնվում են մման իրավիճակում. մինչ գործընկեր կազմակերպության հերթական ներկայացուցիչը կարողանում է ըմբռնել երկրի և կազմակերպության աշխատանքի առանձնահատկությունները, այն իր էական ազդեցությունն է թողնում տրամադրվող օգնության չափի և ձևերի վրա,
- Երբեմն հարկ է լինում բախվել արտաքին գործընկերների որոշակի **«քաղաքականացվածությանը»**, երբ պարտադրվում են առավել քաղաքական, քան բարեսիրական թեմաներ և ծրագրեր: Իհարկե, սա մեծ մասամբ վերաբերում է աշխարհիկ միջազգային կազմակերպություններին, քան կրոնականներին,
- Երբեմն համագործակցության ձևերը սահմանվում են ներքին օրենսդրության բարդ ընթացակարգով (օրինակ՝ մարդասիրական բեռների մաքսագերծում և այլն), և այդ դժվարին ներքին ընթացակարգի **անհասկացողությունը** հանգեցնում է դոնոր կազմակերպությունների հետ անհասկացողության՝ երկրում սոցիալական օգնության ձևերի և մեթոդների իրականացման առումով:

Ներեկեղեցական ռեսուրսներ

Հնարավորություններ

- Եկեղեցին **ամենամեծ վստահությունն** է վայելում երկրի բնակչության շրջանում,
- Եկեղեցին ունի բարեսիրության ավանդույթների **բազմադարյա փորձ**,
- **Ամենուրեքությունը**. հասարակական կառույցների մեջ Եկեղեցին ունի կազմակերպությունների ամենամեծ ցանցը,
- Պետությունը ճանաչում է Եկեղեցու **բարոյական հեղինակությունը**, և դրանով է պայմանավորված պետական աջակցությունը եկեղեցական մի շարք մախաձեռնություններին:

Ռիսկեր

- Սոցիալական աշխատանքների համար սեփական ֆինանսական միջոցներն անբավարար են: Նման միջոցների առկայության դեպքում անգամ գերիշխում են որոշակի **կարծրատիպեր**, որոնք այդ միջոցներն ավելի շատ ուղղում են վանքերի բարեգարդմանն ու բարեկարգմանը, քան սոցիալական գործունեության զարգացմանը,
- Որոշումներ ընդունելիս առկա է որոշակի եկեղեցական «փակվածություն»․ մեծ դերակատարություն ունի քահանայի և առաջնորդի օրհնության գործոնը (աշխարհում՝ շատերին անհասկանալի),
- Կարևոր է հոգևորականի անձնական գործոնը: Որքան էլ սոցիալական գործունեությունը կենսական անհրաժեշտություն ունենա, կան հոգևորականներ, որոնց առավել հաճո է միսիոներական կամ լուսավորչական աշխատանքը, քան սոցիալականը:

Շահութաբեր մախագծեր

Հնարավորություններ

- Լավ կազմակերպված աշխատանքի և մասնագիտորեն մշակված զարգացման ծրագրերի դեպքում հնարավոր է հասնել դոնոր կազմակերպություններից զգալի ֆինանսական անկախության,
- Այդպես կարելի է ապահովել կրոնական պատկանելությամբ հասարակական կազմակերպությունների առավել երկարակեցությունը:

Ռիսկեր

- Առկա է մշտական կախվածությունը շահույթից, մրցակցությունից, շուկայի վիճակից և այլն,
- Նման գործունեության համար կա պատրաստված եկեղեցական կադրերի պակաս:

Պետական աջակցություն

Հնարավորություններ

- Պետության մշտական աջակցությամբ հնարավոր է ապահովել **ծրագրերի և նախագծերի երկարատևությունը**,
- Պետության կողմից մշտական բյուջետային աջակցությունը հնարավորություն է ընձեռում եկեղեցական սոցիալական գործունեության մեջ ընդգրկել նոր կադրեր՝ ապահովելով նրանց ֆինանսավորումն ու աշխատատեղերը:

Ռիսկեր

- Գոյություն ունեցող բյուրոկրատիզմը կարող է էականորեն ազդել եկեղեցիների գործունեության ինքնուրույնության և դինամիկայի վրա,
- Պետության հետ համաձայնագրի կնքմամբ՝ հայտնվում ենք անկատար օրենսդրական դաշտում՝ այդպես մեծացնելով մեր գործունեության ընթացքում օրինախախտության ռիսկերը:

Կայունության վերաբերյալ եզրակացությունը

- Պետք է հաշվի առնել կայունության բոլոր գործոնները (ինչպես արտաքին, այնպես էլ՝ ներքին),
